1915

Գրական, Հասարակական, Քննադատ. Քաղաքագիտական

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍ

Քառասներորդ տարի ՆՈՅԵՄԲԵՐ 1915, № 11—XXVI

Հասցէն՝ Тифлис, Редакція «ТАРАЗ». Tiflis (Caucase), Direction «TARAZ»

Голов. пр., 41 Տելեֆօն 16—90

Խմբագրութիւնը յօդուածները կրճատում է, ենթարկում փոփոխութեան և չբատկելիքը (երեմ թերից պակաս) չի վերադարձնում։

անձնական ընդունելութիւն խմբագրի հետ ԵՐԵՔՇԱԲԹԻ և ՀՈՒՐԲԱԹՇԱԲԹԻ ժ. 11—12։

Բաժանորդագրութիւն ընդունւում է ամեն լեզուով Տարազի յայտարարական տողը առաջին երեսը 40 կոպ., վերջի 25 կոպ. մանրատառ (պրոտիտ)։ Արտասահմանից կրկնակի։ Շատ անգամ կրկնողներն առանձին համաձայնութեամբ։

Աղբիւր-Տարազ ամսական 33 կ.

Տարազի ներկայ №-ը 1 ր.

ՄԵՀԵԴՈՑԻ

ԲԱԺՄԵՐԱԽՏ ՄԱՆԿԱՎԱՐԻ

Ս. ՄԱՆԴԻՆԵԱՆՑ

Նոյեմբերի 28-ին ի Տէր հանգեաւ։

«ԱՂԲԻՒՐ»ի դեկտեմբերի №-ը ամբողջապէս նուիրուում է մեր անմոռանալի աշխատակից հանգուցեալ ուսուցչապետի յիշատակին։

ՊԱՏՐԱՍՏ Է ԱՌԱՋԻԿԱՅ 1916 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ



34-ՐԴ ՏԱՐԻ ԵՒ 27-ՐԴ ՏԱՐԻ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԲԱԺՄԱԲՈՎԱՆԴԱԿ

ՀՈՒՅՍ ՀԱՆԴԻՒՍՆԵՐՒ

արդ կա՞յ աւելացնելու, որ „Աղբիւր“ը հայ մանուկի բարեկամը, մի քանի սերունդ է դաստիարակել, իսկ „Տարազ“ը հայ ՄԻԱԿ իլուստրասիօնն է որ արտացոլում է հայ կեանքը և Միջազգային Մամուլից ճանաչած է իբրև հոչակաւոր հրատարակութիւն, իսկ համառուսական պետական գուցահանդէսում, դեռ սրանից քանի տարի առաջ, պարգևատրուած։

„ԱՂԲԻՒՐ“ և „ՏԱՐԱԶ“Ը իրենց անկախ, ազատ, անկուսակցական ուղղութեամբ պատկանում են հայ ընթերցասէր հայութեան։

ԱՂԲԻՒՐ»ի տարեկան բաժանորդագինը 3 ռ., «ԱՂԲԻՒՐ»-ՏԱՐԱԶ»ը միասին 10 ռ., (արտասահման 50 ֆր., կամ 40 շիլինգ)։

Հասցէն՝ Тифлис, Редакція «АГБЮР»-«ТАРАЗ». Tiflis, Direction «AGBUR»-«TARAZ».

Խմբ.-հրատ. ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ

ԱՊԱՒԻՒԿ ԵՒ ՄԱՍ-ՄԱՍ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԻ ԸՆԴՈՒՆՒՆՈՒՄ

ԱՂԲԻՒՐ»-ՏԱՐԱԶ»ի տարեկան 10 ռ. վճարող բաժանորդները հասարում են հիւրերը Գրական-Գեղագիտական Սալոնին և կարող են յաճախել բոլոր jour fixe-ներին ու օգտուել ընթերցարանից։

Ուշադրութիւն։— Նոր լոյս տեսած «Վան-Տոսպ» շաբաթաթերթը, իբրև իր փախստական ազգայրակիցների օրգան, խմբագրական իր յատուկ կազմն է ունենալու որոշ ֆիզիոնոմիայով և առնչութիւն չունի «ԱՂԲԻՒՐ»-«ՏԱՐԱԶ»ի հետ,

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՊԱՏԿԵՐՆԵՐ

Վեհ. Հայրապետ Տ. Տ. Գեորգ V

† Կարապետ Եպիսկոպոս

Ռուբէն Զարդարեան

† Սեդրաք Մանդինեան

Աղթմ. Ս. Խաչ վանքը հրե. արեւել. կողմէն

Աղթմ. բարձրաքանդակներէն

Աղթմ. Ս. Խաչ վանքը հիւսիս արևմտ. կողմէն

Այգեկութը Շամպանիայի մէջ

Զմեռը Ռուսիայի զանազան մասերում

ՆԻՒԹԵՐ

Հրատապ սփոփանք մայր հայաստանցիներին

Հայրապետական հովանին

ՄԱՀԱԴՈՅԺ-ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

† Կարապետ Եպիսկոպոս

Ռուբէն Զարդարեան

Հ. ԱՃԷՄԵԱՆ

ԳՐԱԿԱՆ

Դարբինը

Թարգմ. ՎԱՂ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Աղթամար ՀԱՅԿԱԶՈՒՆ

Թերթեր իմ յիշողութիւններից

Յ. ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆ

ԹԱՏՐՈՆ-ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Նրանք զգացին (դրամա)

Թրգմ. Ա. ՀԱՅՈՒՄԵԱՆ

Հայոց թատրոն ՍԱՅՕ

Զուբալովի ժողովրդ. թատրոն

Երաժշտ. ժողովրդ. համերգը

Գրական-Գեղագիտ. Սալօն

Պատճէն-հրաւէր

Յայտարարութիւններ

ԲԱՑԻՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1-ԻՆ ՏԱՐԻ „ՎԱՆ-ՏՈՍՊ“ 1-ԻՆ ՏԱՐԻ

Հասարակական, քաղաքական, գրական շաբաթաթերթի

ԲԱԺԱՆԵԳԻՆՆ Է ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Տարեկան 4 ր.	Կէս տարուան 2 ր.—50 կ.	Ամսական 40 կ.	Հատը 10 կ.

Արտասահմանում՝ տարեկան 15 ֆր. վեցամսեան՝ 8 ֆր.։

«ՎԱՆ ՏՈՍՊ»-ին վերաբերեալ նամակները, հեռագիրները և դրամը պէտք է ուղարկել միմիայն խմբագրութեան հասցէով։ «ՎԱՆ ՏՈՍՊ» շաբաթաթերթը ունի իւր յատուկ խմբագրական կազմը և որևէ առնչութիւն չունի «ԱՂԲԻՒՐ»-ի և «ՏԱՐԱԶ»-ի խմբագրութեան հետ։

«ՎԱՆ ՏՈՍՊ»-ի հասցէն՝ Тифлис, Головинскій пр. № 41, арм. журнала „ВАН-ТОСП“ արտասահմանից՝ Redaction du journal Armenien «VAN-TOSP» Russie. Tiflis Golovinski pr. № 41.

ՀՐԱՏԱՊ ՍՓՈՓԱՆՔ ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆՑԻՆԵՐԻՆ

ԸՆԴ ՀՈՎԱՆԵԱՒ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Հայութեան բոլոր խաւերից գորովագութ աջակիցների շնորհիւ շարունակւում է «Հրատապ սփոփանքը»։

Զմեռային շինութիւնը (քար աղիւս, երկաթ ապակի) վերջացաւ և ներկայ Նոյեմբերի մէկին մեծ հանդիսով օրհնուեց և բացւեց։

Բազմահազար ժողովուրդը հայութեան բոլոր խաւերից և օտարազգի հիւրեր այդ օրը լցրել էին ընդարձակ այգին։ Յատուկ հրաւիրագրերով կանչւած էին ազգային հաստատութիւնների ներկայացուցիչներ և հասարակական գործիչներ։ Լրագրով հրատարակւած էր Թիֆլիսի բոլոր ազգաբնակչութեանը։ Հանդիսաւորը հ. Բենիկ վարդապետն էր։ Ներկայ էին շատ քահանաներ, եղբ. Օգն. Նախագահ, Ս. Էջմիածնից Ձեմարանի տեսուչ հ. Գաբրիէլին և Ղարաբաղի Թեմ. առաջնորդ հ. Զաւէն վարդապետները, Կուսանաց անապատի Մայրապետ Հռիփսիմէ Թայիրեանը իր միաբան կոյսերով։ Օրը տաք էր և պարզ։ Այդ օրը մկրտւեց Հրատապ սփոփանքի մի նորածին մանուկ։ Կնքահայրութեան հրաւիրւեց ներկայ եղող համային ժողովուրդը, որի թախանձագին պահանջով կնքահայր եղաւ ապաստանարանի տէր-տնօրէնը։ Սա էլ իր կողմից հրաւիրեց սանամայր Մայրապետ կոյս Հռիփսիմէ Թայիրեանին։ Հանդէսը յուզիչ էր և նշանակալից. հեկեկում էր ներկայ ժողովուրդը։ Նորածինը հինգ անունով կոչւեցաւ՝ Հրատապ—Հրածին—Անահիտ — Արշալոյս — Տիգրանուհի, վերջինս իրանց՝ փախստականների փափաքով։ Իր գոյութեան ամբողջ ընթացքում Հրատապ սփոփանքի մինչև օրս չը պատահեց ոչ մի աղէտ, ոչ մի մահ, այլ ընդհակառակ իւրաքանչիւր շաբաթ, սկսած Նոյեմբերի մէկից նորածինների մկրտութիւնները են կատարւում։ Նոյեմբերի 6-ին Օգոստափառ Փոխարքայ Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլաևիչի ծննդեան տարեդարձին մկրտւեց երկրորդ նորածինը. որին տրւեց ի պատիւ Փոխարքայի Նիկողայոս անունը։ Կնքահայրութիւն ստանձնել էր Նախատամատոյցը ի դէմս մեր վոխ-նախագահ, Մշակի խմբագիր պ. Հ. Առաքելեանի։ Հետևեալ կիրակի՝ 3-րդ նորածնի մկրտութիւնը կայացաւ Նոյեմբ. 12 ին որին կնքահայրութիւնը ստանձնել էր Հայոց Դրամատիկ դերասանների ընկերակցութիւնը ի դէմս Հայ թատրոնի պարծանք վետերան տ. Սիրանոյշի՝ սանամայր և պ. Յ. Աբելեան կնքահայր. նորածնին տրւեց հայոց թատրոնական հոլիղոնից վաղանցուկ աստղ դերասանուհի Աստղիկի անունը։ Կիրակի Նոյեմբ. 22-ին մկրտւեց 4-րդ բեկորիկը, որին ի պատիւ Հրատապ սփոփանքի բարձր հովանաւոր Վեհափառ Կաթուղիկոսի, տրւեց Գէորգ անունը։ Սրա կնքահայրութիւնը ապաստարանս ոչ ոքի չը զիջանեց՝ կնքահայրը, հէնց այդ օրը փողոցում գտնւած և ապաստարանս բերւած հինգ տարեկան Յարէթը կարգւեց, իսկ սանամայրը Վարագայ վանքի 45 տար. վերակացու պ. Պետրոսի ծերունազարդ մայրը, որ մշտական պատւական հիւրն է ապաստարանիս։ Մանուկ կնքահօրը նոյն օրը փողոցում գտնողը փախստական Տէր-Վարդան քահանայ Նալբանդեան (Անդրանիկի զինակից Դալի-Մաղրասան) մանուկ կնքահօր խնամակալ պաշտօնակատարը եղաւ։ Մկրտութեան ծէսերը բեկորիկների կատարել է մատենադիր հ. Ճուղուրեան քահանան վանեցի սարկաւագ Շերենցի սպասաւորութեամբ, բացառութեամբ Աստղիկի մկրտութեան որի ծէսը կատարեց Մուշի առաջնորդ. տեղապահ Տէր-Եղիշէն։ Գէորգի մկրտութեան մի յուզիչ նւէր ստացւեց։ Ռուս, 40-45 տարեկան մի կին, մեզ բոլորովին անծանօթ և անշուշտ հասարակ մահկանացու՝ աշխատաւոր բերել էր նորածնի համար զգեստ և անկողին շատ փարթամ և բոլորովին նոր։ Մեր հրաւէրով մնաց մկրտութեան հանդէսին և յուզւած աղօթում էր։ Յարգանք գորովագութ կնոջ։

ԲԵՆԻԿ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԽՕՍՔԸ ՋՄԵՌՆԱՅԻՆ ԱՊԱՍՏԱՆԱՐԱՆԻ ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԷՍԻՆ

Դառն ու դժնդակ իրականութիւն, աղէտներից սոսկալին, գաղանութիւններից գաղանագոյնը որպէս կայծակ տեղաց ու հրձիգ արաւ մեր սիրուն հայրենիքը որպէս ահեղ փոթորիկ ճղակոտոր արաւ հայութեան բազմաստեղն ծառը. որպէս երկրաշարժ հիմքերից շարժեց Հայաստան ու նրա ծոցումը դարերով թառած գիւղ ու քաղաք հիմն ի վեր տապալեց։

Այն բնաւեր, ցաք ու ցրիւ ժողովրդի մանրիկ բեկորներն են ահա, որ փլատակներից դուրս գալով՝ ձեռքը ծոցին, գլխիկնիկոր այստեղ են խմբւած։

Հողմավար տերևների զալուկ ճնշողով, որին նազարեանի գերթութեամբ լի եղերայրական ձեռքը այստեղ ձւարեց, ինչպէս ձուկն իւր ձկնիկներին ինչպէս հաւն իւր ձագերին։

Ամրան օրերին՝ բացօդեայ, ծառերի հովաստուն շուքին տակ ինչպէս հովիւն իւր գառներին սարալանջի ծաղկավառ թաւուտներում, ձմրան օրերին՝ այս յանկարծ բուսած, անակնկալ շէնքի մէջ՝ ինչպէս տաքուկ փարախում. Նազարեանը խնամեց նրանց ու խնամում է։

Ահա հովիւ քաջ, հովիւ բարի, կոչնեաւոր հովիւ, հովիւ առանց հովական գաւազանի ու մախաղի, որ իւր անձը իւր ընտրած հօտի վրայ է դրել։

Այսօր այդ տարօրինակ հովւի ձայնը, հրաւէրը՝ որպէս սրբինդ քաղցրախօս, մեզ բերել է այստեղ։ Նա կանչում է. «եկէք շքեղներ, ձեր ներկայութեամբ շուք տւէք իմ շքաթափ խեղճերին, հրատապ սփոփանք բերէք աւազակների ձեռքերից վիրաւոր այս սգաւորներին, եկէք «հրատապ» ապաստարանին ձեր օրհնութիւնը բերէք. եկէք «հրատապ» նորածին մանկան ազգանուն մկրտենք»։ Ամէն ինչ «հրատապ» է այս «հրատապ» սրտի «հրատապ» պարտականութիւնների տիրոջ համար։

Աչք ածեցէք ձեր ստացած հրաւէրի գեղանի սրտաշարժ պատկերը. աւերակացած հայրենի տաճարից ընկած մի քարի վրայ քար կտրած նստած է սգաւոր մի կին, մեռելատիպ մի մայր, ձեռնամած ձեռքերի վրայ գլուխը դրած։ Նրա լուռ հառաչը սրտից, վիշտն՝ աչքերից կաթում է ծնկների վրայ քաղցից հիւծւած ու մեռած սիրասուն զաւակի վրայ։

Տեսարանը շարժել է երկինքը այրել նրա փակ դռները և այնտեղից երկիր է քաշել մխիթարիչ հրեշտակին, որը մի ձեռքով վշտից քարացած մօրն է գրկել, միւսով իւր աչքերն է փակել, որ էլ չտեսնի այդ սարսուռ տեսարանը, որ չըփլի իւր սիրտը։ Այդ սգաւոր այրին հազարաւոր հայ մայրերն են, ինքը՝ մայր Հայաստանը, յօշոտւած զաւակների դիակների վրայ քարացած նստած։

«Պէտք է նրան մխիթարել» մտածում է մեր «հրատապ» դերասիչը. ա՛յ, ես ինչ կանեմ «հրատապ հրաւէր կուղարկեմ հայ կարգաւոր հովիւներին, հայրերին մայրերին, ես նրանց առաջը կը դնեմ սգաւոր որդնկորոյս մայր Հայաստանի պատկերը, որի կսկծից խորտակւի նրանց սրտերի փակ դռները, մարմրին առած հրեշտակ դառած բարութիւնը այնտեղից դուրս գայ և մխիթ
րէ հայրենիքը։ Մենք ամէն
միասին դիակնացած զաւակն
փոխարէն նորածին մանկանը
դնենք նրա գիրկը, յոյս կը տ
շնչենք նրան, գալիք լաւագ
օրերի յոյս, որ նա վշտից չը մ
նի։

Եւ ով գիտէ թէ այդ նոր
ձինը, կամ նրանցից մէկը մ
մանակին իւր հզօր բազկով
սրբի Մայր Հայաստանի արցունքը։ Զէ որ ազգերի և մարդկ
թեան խոշոր բարերարները փ
կակեցութեան մէջ ծնւած
անւածներից չեն եղել, այլ
րերում, խրճիթներում վշ
ծնւած, տառապանքով սն
արիւն արցունքով ցօղւած
րից։ Դրանք են. որ խորապէս
ըմբռնում տանջւած ազգի հո
դրանք են հառաջանքից, արի
նից, արցունքից բեկւածնե
որ պինդ են սիրում հառաչող
րին։

Ինչու՞ չը յուսանք թէ
նոր քարայրի մէջ «հրատապ»
նւած «հրատապ» մկրտւած մ
նուկները կելնեն մի օր ու վ
դիմի շատ գործիչների համ
կասեն. «նրանք որ յառաջ քա
դիս էին դողք էին և աւազակ
և ցոյց կտան գործի, կեանք
փրկութեան ուղիղ ճամբան։

Ուրեմն եկէք մկրտենք
բատապ ծննդեամբ աշխարհ եկ
այս մանուկներին ու նրանց վ
րայ դնենք մեր յոյսը»։

Ինչպիսի հզօր ու քաղ
արձագաքով է յետ դարձել
«հրատապ» հրաւէրը Մայր Էջմի
ծնից, այդ արձագանքը տանի
ազգիս Վեհափառ Կաթուղիկո
նա օրհնում է Տիգրան Նազա
եանի անձնուրաց գործունէ
թիւնը, օրհնում գաղթականի
պատսպարանը, օրհնում է ձ
ամէնքիդ, այն ամենին, որ
հոգու մէջ դութ, սէր և քնքշ
թիւն կայ դէպի գաղթական հա
ու հայութիւնը։ Նա 1000 ռուբ
նշանակելով նպաստ Նազարեան
ապաստանարանին, իւր բարե
հայրական հովանաւորութեա
տակն է առնում Նազարեան
ազնիւ գործը և յանձնում նր
խնամքին տուն ու գաղթականի

Վեհափառի այս օրհութի
հովանաւորութիւնը, նւէրը բ
րութեան և քնքշութեան մի օ
նակ է, որ նա դնում է ձեր ա
նիդ առաջ, իբրև ընդօրինակ
պարտականութիւն։

Միամանակ այդ մի բացա
ձակ վստահութեան քէն է,
Ամենայն Հայոց Հայրապետը
լիս է մի ազնիւ անձի, գաղափ
րական Նազարեանին։

Սրտի երախտագիտութեա
աղօթենք մեր Վեհափառ Կաթ
ղիկոսի արևշատութեան, մեր
կեղեցու և հայրապետութե
հաստատութեան և յարատև
թեան համար։

ԽՄԲԱԳԻՐ-ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

Տիգրան Նազարեան

REDACTEUR EN CHEF ET DIRECTEUR

Tigran Nazarian

ԹԻՓԼԻՍ № 11 ՆՈՅԵՄԲԵՐ XXVI—1951 Tiflis

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՈՎԱՆԻՆ

ՀՐԱՏԱՊ ՍՓՈՓԱՆՔ ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆՑԻՆԵՐԻՆ

Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսը Հրատապ Սփոփանքի ձմեռային նորակառոյց շինութեան բացման և Հայաստանի բեկորներին հրատապ-հրաժիննեբի մկրտութեան առիթով ուղարկել է Հայրապետական իր օրհնութիւնը, տածելով իր Բարձր Հովանին ապաստարանիս։

ՆՈՐԻՆ ՕԾՈՒԹԻՒՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ

Տ. Տ. ԳԷՈՐԳ V.

Հովանաւոր Հրատապ Սփոփանք Մայր Հայաստանցիներու ապաստարանին

Հեռագրով՝

Տիգրան Նազարեանին

Հոգով միանում ենք համայն ներկայ եղող հոգեւորական զաւակներով հանդերձ դժխեմ բաղդից առ Մեզ հալածական եկած որբերի համար նոր ապաստարանի հանդիսաւոր բացմանը։ Թող Յիսուս Քրիստոս՝ Մեր տէրը ժողովող իր աստուածային սիրազեղ գոգը մանուկներին, որբերին, այրիներին եւ վշտացեալներին, օգնէ եւ օրհնէ ձեզ՝ նախաձեռնողիդ եւ բոլոր ներկայ նուիրաբերողներին, որոնք իրանց սրտին մօտ են ընդունում մեծաւորի վիշտը, շարունակելու գլուխ տանել ցվերջ՝ բարւոք սկսուած վսեմ գործը սիրոյ։

Օրհնում եմք ձեզ, բոլոր ներկայ եղողներին եւ գթութեան յարկի տակ ապաւէն գտածներին՝ ընդունելով ապաստարանը Մեր հովանաւորութեան ներքոյ։

ԳԷՈՐԳ V.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին
30 հոկտեմբ. 1915 թ.

Իսկ դիւանապետի կողմից ստացած է հետեւեալ հեռագիրը.

Թիֆլիս, Տ. Նազարեանին

Նորին Սրբութիւնը բարեհաճեց ընդունել ձեր ապաստարանը իր հովանաւորութեան տակ և հրամայեց փոխադրել Եղբայրական Օգնութեան միջոցներից միանուագ մի հազար րուբլի։ Թող դա նպաստէ քեթևացնելու ծանր կարիքը մեր եղբայրների, քոյրերի և որբերի։

Դիւանապետ՝ Տիրայր վարդապետ

ՄԱՀՓՈՅԻ

ԿԱՐԱՊԵՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Հազիւ տարին բոլորեց, որ հայ եկեղեցու արժանաւորագոյն հովիւ Կարապետ եպիսկոպոսը ժամանել էր Բագու, իբրև Շամախու թեմի առաջնորդ և այսօր ահա բոթաբեր հեռագիրն է գուժում նրա վաղաժամ մահը՝ նոյեմբերի 18-ին, կարճատեւ հիւանդութիւնից յետոյ ի Տէր հանգաւ Շամախու թեմական առաջնորդ Կարապետ եպիսկոպոսը։

Բագուն ինչպէս անցեալ տարի փայլուն հանդիսով դիմաւորեց նորահաստատ առաջնորդին, մատուցանելով նրան հաւաստիացումներ, ջջակից լինելու գիտնական, բազմափորձ հովւին, այսօր էլ նոյնպէս միահամուռ զգացումներով, իր վիշտը արտայայտեց, վաղաժամ մահը ողբալով իր հովւին։

Վեհափառ Կաթողիկոսը ի Տէր հանգուցեալ Կարապետ եպիսկոպոսի Թաղմանը, Բագւայ հօտի աղերսով, հրամայեց Թիֆլիսի թեմական առաջնորդին Թաղման հանդիսակատար լինել։

Թաղումը կայացաւ կիրակի, նոյեմբերի 22-ին և աճիւնն ամփոփեց Բագւայ Լուսաւորչի մայր տաճարում։

Կարապետ եպիսկոպոսը յայտնի է համայն հայութեան ոչ միայն իբրև մի բարձրաստիճան հոգևորական, որ վարել է շատ պատասխանատու պաշտօններ (Ատրպատականի առաջնորդութիւնը, որ կամովին հրաժարեց այդ պաշտօնից) այլ նա մանաւանդ իբրև պարագլուխ մի տուար, լուրջ մտածողների, որոնք դրել էին և վերջին կաթողիկոսական ընտրութիւններին նրա թեկնածութիւնը։ Նորահաստատ սբբազան առաջնորդ Կարապետ եպիսկոպոսը ծնել է Դողինեաց գաւառի Ճղնա գիւղում 1866 թ. մարտի 17-ին։ Սկզբնական ուսումը ծննդավայրում և Զաքաթալում ստանալով, 1880 թ. ընդունւում է ս. Էջմիածնայ Գէորգեան ճեմարանում ու 1888 թ. իբրև միշտ առաջին աշակերտ, աւարտում մրցանակով։ Մանաւանդ ուշադրութեան է առնւում նրա դեռ աշակերտական «Վրաց քաժանման եւ Հայոց եկեղեցու ուղափառութեան մասին» շարադրութիւնը։ Այդ ժամանակ դասախօսում էր և Օրմանեան արքեպ., որի օրով և ընդունում է կուսակրօնութիւն ու միաժամանակ ճեմում ճեմարանում իբրև վերակացու, մատենադարանապետ և ապա ուսուցիչ հայոց պատմութեան, աշ-

Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչեան
1866—† 1915.

խարհագրութեան և քրիստ. վարդապետութեան։ 1898 թ. հոկտ. Թիֆլիսի Քամոյենց եկեղեցու թոշակով (ամսական 70 ր.) ուղևորւում է Գերմանիա և ուսանում աստւածաբանութիւն, ստանալով Լայպցիգում փիլիսոփայութեան դոկտորի, իսկ Մայրբուրգում աստւածաբանութեան լեցինցիատի (մագիստրոս) աստիճաններ։ Ապա մի տարի Պարիզում իբրև ազատ ունկնդիր լսում է Սօրբօնում, կօլէժ դ'Ֆրանսում են. նշանաւոր դասախօսների ու ֆրանս. ազգ. մատենադարանում ուսումնասիրում է հայերէն ձեռագիրներ։ Ունի մի շարք գիտնական աշխատութիւններ, տպւած «Արարատում», գերմ. մանուագիտական հանդէսներում և առանձին գրքերով, որոնցից կան պահւած և իմմիրեան մբբցանակով։

Ցարդանք հայ եկեղեցու արժանաւորագոյն եկեղեցականի յիշատակին։

Գրական-Գեղագիտական Սալօնը, ուրբաթ, նոյեմբ. 27-ին իր հերթական հանդիսաւոր երեկոյթը յատկացրել էր գիտնական հանգուցեալ հովւին։

ՌՈՒԲԷՆ ԶԱՐԴԱՐԵԱՆ

Տաճկահայ աքսորուած մտաւորականներու մէջն է Բրքրանայ դրականութեան վերածնութեան այս նշանաւոր դրագէտ-հրապարակագիրը, Ռուբէն Զարդարեանը որ ծնած է Եարբեքիրի մէջ 1874 թուին։ Նախնական ուսումը քաղաքի ազգային վարժարանի մէջ ստանալէ յետոյ կը նուիրւի ուսուցչութեան և կը պաշտօնավարէ Եարբեքիրի դէղը. վարժարանին մէջ, իբրև ատեղ ուսուցիչ։

1903-ին իբրև յեղափ. գործիչ կը ձերբակալւի Եարբեքիրի մէջ, բայց անպարտ արձակւելէն յետոյ կ'անցնի Իզմիր և ատեն մը կը վարէ Մանիսայի ազգ. վարժարանի տեսչութիւնը։ 1905-ին Իզմիրի մէջ նոր ձերբակալութենէ մը հաղիւ ազատւելով կանցնի Պուլկարիա և Փիլիպէի մէջ կը հրատարակէ Ռազմիկ թերթը մինչև 1908-ը, և երբ կը հռչակւի Օսմ. սահմանադրութիւնը կ'անցնի Պօլիս և 1909-ին կը հիմնէ «Ազատամարտ» մեծ օրաթերթը և կը վարէ անոր խմբագրապետութիւնը։

Զարդարեանը իր գրական գործունէութիւնը սկսած է կանուխէն, երբ դեռ հաղիւ տասնեւօթ տարեկան էր։ Իր առաջին գրութիւնը Յ. Փալակաշեանի Ծաղիկ-ի մէջ կ'երեւայ 1890-ին։ Հետզհետէ կ'աշխատակցի Գ.

Զօհրապի և Հ. Ասատուրի Մասիս-ներուն, իսկ 1895-ին և յետոյ կ'աշխատակցի Արշակ Զօպանեանի Ծաղիկ-ին ուր մեծ քաջալերութիւն կը գտնէ։ 1900-էն ալ կը սկսի աշխատակցել Մ. Մամուրեանի Արեւելեան Մամուլ-ին։ Ասոնցմէ յետոյ յաջորդաբար կ'աշխատակցի Արեւելք-ին, Շիրակ-ին, Ծաղիկ-ին, Բանբեր-ին և ապա իր հիմնած Ռազմիկ-ի մէջ երեան կը բերէ իր լաւագոյն գրուածները։ 1910-ին հրատարակեց իր նորավէպերու հատոր մը, «Ցայգալոյս» խորագրով որը Ֆրանսերէնի թարգմանուեցաւ Ա. Զօպանեանի, Ե. Գալանջեանի և Գ. Եսայեանի կողմէ։ Ցայգալոյս-ը թարգմանուած է նաև Անգլիերէնի և Թիւրքերէնի։

Ռ. Զարդարեանի մասին գրած են, Ա. Արփիարեան, Դեղունի-ի և Լուսաբեր-ի մէջ, Վահան Փափազեան և Ա. Ցարութիւնեան Ազատամարտ-ի, Ատրուշան գրախօսական Ցայգալոյս-ի մասին՝ Հորիզոն-ի մէջ. Վ. Թէքէեան Շիրակ-ի Ա. Զօպանեան «Mercure de Fraçne»-ի, Կասթօն-Պոնէ-Մօռի և Ֆռէտէռիք-Մաքլէռ Ցայգալոյս-ի Ֆր. թարգմանութեան մէջ ևայլն։

Թրքահայ գրականութեան բնաշխարհիկ լեզուի մշակութեան և յղկման մէջ Ռ. Զարդարեանը կարեւոր տեղ կը գրաւէ. Խրիմեան Հայրիկի, Սրուանձտեանցի Թլկատնցիի, Դեղամի, Զիթունիի և այլոց կարգին։ Զարդարեանի գրական լեզուն գաւառացի բոլոր գրագէտներու մէջ ամենէն ճոխ, ճկուն, ներդաշնակ և մաքուրն է։ Իր գրելու ոճը ամփոփ, դիւրաթեք և սահուն է. վարպետօրէն կը գործածէ ժողովրդական քաղցրահնչիւն բառեր և դարձուածքներ։ Իր քերթուածներու յատկանիշներն և առաւելութիւնները կը կայանան պատկերներու առատութեանց և գունագեղութեանց, զգացումներու յորդութեան և երանգներու ճոխութեանը մէջ։ Իր քերթուածներուն անմիջական մասը կը կազմեն իր հէքեաթները, որոնց մշակոյթի մէջ Զարդարեանը հիանալիօրէն յաջողած է։ Այս ճիւղին մէջ Զարդարեանը կը ներկայանայ իբրև անզուգական վարպետ և մանաղէտ։ Բնութեան գեղեցկութիւններու հանդէպ զգայուն, ազատութեան, արդարութեան երջանկութեան սիրահար, իր մայրենի երկրի հոգ ու ջրին հաւատարիմ է Զարդարեանը, որ իր Ցայգալոյսը ընթերցողին կը ներկայացնէ որպէս սքանչելի հանդիսարան մը և կամ անուշաբոյր ծաղկեփունջ մը հէքեաթով, վիպակով, հովւերգութեամբ, պատկերով, նկարագրութեամբ և տպաւորութեամբ վինջւած։

«Անոր գրականութիւնը —կըսէ Տիկ. Զապէլ Եսայեանը— մեզի համար միշտ եղաւ գերագոյն բուրմունքը այն ժողովրդի հոգիին որուն մէկ հարազատ զաւակն էր ինքը և իր միջոցաւ հաղորդակից եղանք հեռաւոր և մեզի անծանօթ արիւնակիցներու տա-

Ռուբէն Զարդարեան

Թիւրքահայ գրակ. յայտնի գրագէտ հրապարակախօս

տանքներուն, պզտիկ ուրախութեանց և մեծ վշտերուն ժպիտի և գոհունակութեան խուսափուկ պահերուն և յարատեւող թշուառութեան, մէկ խօսքով անոնց ամբողջական կեանքին յուզումներուն և յոյսերուն»։ Թրքահայ գրականութեան այս անզուգական տաղանդի վրայ հիանալով, տարագիր և աքսորական, կոմիտաս վարդապետը սա պէս կ'ըսէ. «Ռուբէն Զարդարեանը մէկն է հայ գրականութեան սակաւաթիւ դէմքերէն, որոնք ճանչցած են գաւառը իր բնական և հոգեկան հարստութիւններով, և իրենց գործը կերտած են այդ հարստութիւններուն վրայ, որոնք ժողովուրդինն են։ Զարդարեան իբր յեղափոխական, իր սիրտը կապած է ժողովուրդին սիրտին, և իբր գրագէտ իր միտքը կապած է ժողովրդի միտքին հետ։ Ժողովուրդին զաւակն է Զարդարեանը»։

Զարդարեանը շատ մեծ ապագայ կը խոստանար հայ գրականութեան. իր բնածին տաղանդ դեռ նոր պիտի յայտնագործէր։

Այս տարւայ Ապրիլին, տաճկահայ մարաիրոսաղրութեան նախօրեակի առաջին ողբալի լուրը թրքահայ մտաւորականութիւնն եղաւ։ Թրքահայ ամբողջ մտաւորականները, տարագրեցան և աքսորեցան Ասոնց կարգէն և ընկերն էր ահա Ռուբէն Զարդարեանը, որ հալածական ու տարագիր, աքսորեցին Անատոլիի խորքերը։ Իսկ այժմ ուր է, ողջ է թէ սպանուած, ոչ մի լուր։

«Հօրմէս ու իր ընկերներէն լուր չկայ. կ'ապրի՞ն արդեօք, տանջարանո՞ր նետուած են, թէ՝ կը քալեն արեւավառ ճամբերու փոշիներուն մէջ... Զենք գիտեր»։

Զարդարեանի հայրազուրկ երէցորդին, Ռաֆայէլը, իր սիրեցեալ հօր մասին այս սեւ տողերը չիշատակած է իր օրագրի մէջ. դառն ճակատագիր, աւա՛ղ...

Զարդարեանի ամուսինն ու չորս մանչերը իրենց սիրելիի նման հալածական ու տարագիր՝ քանի մը ամիս առաջ Թիֆլիս եկան։

Հ. Աճէմեան

ԴԱՐԲԻՆԸ

(Էմիլ Վերհարնից)

Բրակի առաջ, հսկայ դարբնոցում,
Ամառաւայ տօթից կորած քրտինքում,
Սևացած դէմքով, արձանի նման
Դառոզ կանգած է Դարբինը՝- հսկան։
Ջնդանի վրայ, խաւար դարբնոցում,
Անցեալ օրերի առլին վայրկեանից,
կարծր պողպատի անթիւ շերտերից
Դործիքներ է միշտ անդատար կռում...
Ցամառ աշխատանքի մէջ կարծրացած,
Ծանր կռանը ձեռքի մէջ առած,
Դժւածի նման,
Դարբինը՜- հսկան
կռում է անվերջ հրաշէկ շերտեր
Դունաթափ, կարմիր
Փխրուն մետաղի,
Ուժեղ հարւածով իւր ծանր մուրճի։

Նոքա, որ փոխարինեցին բարկութեամբ վախը
Եւ լուռ ու անձայն,
Սեղմած բռունցքների մէջ թագցրած իրանց
զայրոյթը

Ամեն ինչ տարան,
Հասկացան մի օր ծածկւած գաղտնիքը.
Թէ ինչ ցնորքով է տարւած Դարբինը
Եւ ինչու յանկարծ
Նրա շրթունքների միջից սղմւած,
Դուրս չի թռչում մի օր ճիչը կաշկանդւած
Այլ նրա դէմքը՝- հանգիստ, աննկուն,
Լուռ է և սառը զերթ մարմարիոն։
Իսկ այն ամենքը, զուր դղրդիւնը որոնց ճառերի
Ջաղցած շների հաչոցի նման խաւար հովիտում,
կամ փչակի առաջ չորացած ծառի,
Մոլոռ քամին է դէպ ամեն կողմ ցրում,..
Նոքա ամենքը, որ վախկոտ հոգւով
Տարւած են միայն մի ստոր ցանկութեամբ՝—
Իրանց եսասէր ու անարգ մտքով,—
Թերահաւատութեամբ, կամ թշնամութեամբ
Իրանց վախկոտ հայեացքը անհանգիստ երկիւղով
Ցառած նրա աչքերի փայլի մէջ անվրդով,
Տեսնում են նոցա մէջ խաւար լռութիւն...
Դարբինը կռում է և մուրճը զարկում,
Օրերի յետքից օրերն են անցնում
Եւ տարիները միմեանց յաջորդում,
Նա անվերջ լցնում է իւր հնոցի մէջը
Հասունցած վրէժի խորխոտ որոտը,
Թշնամութիւնը՝ համր, դարևոր,
Ցաղթել, կամ մեռնելու պատրաստակամութիւնը,
Ցամառութեան ոյժը և կատաղութեան կիրքը
Պատւաւոր։

Նա անվախ նետում է իւր հնոցի մէջ,
Միշտ տիրապետող ձգտումներին սրտի,
Տանջանք, բարկութիւն, աղաղակ վրէժի,
Ցասկոտ մոլեգնութեան ցաւերը անվերջ,
Որպէսզի նոցա տայ, զարկերով մուրճի,
Պողպատի կարծրութիւն, փայլը կայծակի։
Մի չնչին յեաքը
Ճնշող երկիւղի, կասկածի օրհասական,
Չը պառկեց երբէք մութ խաւար ամպի
նման

Հպարտ, համարձակ նրա ճակտի վրան։
Իւր հսկայ մարմնով թեքւած աննկուն
կրակի վրայ՝ պայծառ ու փայլուն,
Նրա ցոլքերի մէջ՝ մուգ-բոսորագոյն,
Հպարտ կանգնած է նա։
Օդի մէջ ցրւած ոսկեզօծ փոշով,
կրակի ցոլքերի փայլուն պսակով
Ծածկւած է հպարտ, սառ ու անվրդով
Նրա ճակատը։
Եւ նա զգացած
կարծես նրա մարմինն է երկաթէ ջիլերից,
Ամբողջովին կազմւած պինդ մկանուներից,
Մի ուժգին թափով համարձակ սրտի,
Ամեհի մուրճը ձեռքի մէջ առած,
Ամուր զարկում է
Միայն մի անվերջ ցնորքով տարւած.
Ազատութեանն է նա միշտ նւիրւած,
Որ լուռ ննջում է
Նրա հոգու մէջ, անգութ աշխարհի
Ցաւերից տանջւած։

Տեսել է անվերջ շարքը ցաւերի,
Անսահման շարքը սուտ խոստումնքերի,
Անպէտք խորհուրդներ առաջնորդների,
Դարման դնելու ցաւին աղքատի։
Սուտ մարգարէների լեզուն թունաւոր
Ճշմարտութեան դիմաց՝ սարսափն ահաւոր։
Ծածկոցի յետևում՝ արևի լոյսը,
Անխիղճ ու աներկիւղ անվերջ կարիքը
Ճշմարտութեան, սիրոյ պատգամ մոռացւած

Լւանում է արեամբ շողշողուն սուրը ....
Զոհարանի առաջ, աղքատը ճնշւած,
Ընկած իւր քանդւած խրճիթի տակը...
Շղթաների կապանքն է սուրը աշխատանքի վրան
Ջաղաքների շարժման մէջ և գիւղերի թմրութեան...
Անգութ պետերի ձեռքումն են գտնւում, չինծու օրէնքի շղթայով կապւած,
Մարդկանց ապրելու իրաւունքները, ազատութեան սէրը և երջանկութիւն...
Ժամի շւաքը, որ միշտ ծածկում է խղճուկ ու խաւար գիւղերից թմրած,
Միշտ բարձր փայլող արևի լոյսը, անսահման սէրը սուրը ազատութեան ...
Ջքնաղ օրհներգը յաղթական սիրոյ և փայլուն լոյսը կրքոտ գգւանքի,
Անվերջ, անսահման խեղդւած, մեռցւած՝ ընորհիւ միշտ սուտ, կեղծ պատգամների,
կանաչ թոյնը կարկաչահոս աղբիւրների յատակում,
Միշտ ծծում է մարդկանց խիղճը շատ դարերի ընթացքում...
Անվերջ շարքից յետոյ սուտ խոստումների, կեղծ երդումների,
Որ մի օր արւած էր մարդկանց ամբոխին յուզւած, կատաղի
Դարձեալ անցեալի պէս անսահման շարքը ցաւ ու տանջանքի...

Հպարտ դարբինը վաղուց է լռել
Գեղեցիկ խօսքեր աղմկալի ճառեր,

Դատարկ ու անպէտք կուի հրաւէր
Ներան վաղուց են զգեցնել դարձել։
Նա շատ լաւ գիտէ, որ ինքը, կեանքը
Անշեղ կընթանայ փոթորկի ժամին.
Ճակատագրական նրա ընթացքը
Երբէք չի փոխուիլ վերջին վայրկեանին։
Նա գիտէ, այժմ կանգնած է ինքը
Ճակատագրական մի գծի վրայ
Եւ յետ կը դառնայ կուի դաշտիցը
Միայն վահանով կամ վահանի վրայ։
Հոգ չէ, թէ դարձեալ առաջւայ նման
Նրա թանկագին դրօշակիցը
Երես կը դարձնէ, թշնամու նման,
Դարերով սպասած սուրբ յաղթութիւնը.
Նա հպարտութեամբ կուրծքը դէմ կըտար
Եւ, աչքը յառած դրօշի վրայ,
Մինչ վերջին շունչը, անվերջ կը կուի,
Որ նրա հետ միատեղ յաղթի կամ մեռնի..
Անյաղթ, անեղկիւղ նրա կամքի ոյժը
Ալիքների պէս կրծքումն է յուզւում.
Կարծես զարթրել է փոթորկոտ ծովը,
Ափերին զարկւում և ալէկոծւում։
Ինչ է ուզում նա. նա ուզում է որ
Շնորհիւ իւր կարծր, պողպատէ կամքի,
Կարենար նետուիլ խօլ գիշերների
Անյայտութեան մէջ՝ խաւար դարևոր,
Անցեալ դարերի կողմից կտակւած
Նոր գաղտնիքների պատերը փշրել,
Որ կարողանայ նոցա մէջ գտնել
Սուրբ ազատութեան լոյսը կաշկանդւած ...։
Եւ լուռ լսում է յոգնած դարբինը,
Ինչպէս երկրի մի ծայրից միւսը
Արցունք է թափւում վախկոտ սրտերից,
Որք չեն ամրացած փոթորիկներից։
Նա շատ վաղուց է ասել ինքն իրան,
Որ հեծեծանքը, փոխւած բարկութեան
Կը միացնէ իրար հետ մի օր
Վրիժառու սրտեր՝ անթիւ, բիւրաւոր...
Նա գիտէ, իրանց, ճակատագիրը
Վիճակ է ձգել դնելու հիմքը
Մի նոր ու փայլուն դարեշրջանի,
Որին կը սպասէ ողջ մարդկութիւնը։
Եւ մարդկանց անյայտ, գաղտնի լծակը,
Որ կառավարէ ողջ տիեզերքը,
Կը նետէ նոցա դէպ մի նոր ուղի,
Դէպ երջանկութեան, սիրոյ դրախտը...

Միայն պէտք է որսալ րոպէն ցանկալի,
Երբ պատրաստւում է երկունքը կեանքի
Նոր ու լուսաւոր, — փոխարէն հնի, —
Եւ խաւարի մէջ լուռ գիշերների
Ինչպէս քայլերի խլացած ձայնը,
Կը ննջէ նա, այդ ցանկալի ժամը, գեղգեղուն զարկով
Եւ կ'լռէ աղմուկ դրօշների շուրջը,
Որ ծածանւում են մեղմիկ զեփիւռի տակը սուլելով։
Թող լռեն ձայներ անպէտք վէճերի,
Կուի ելնողը լուռ պիտի լինի...
Նա միշտ պատրաստ է և չի սպասում ոչ մարգարէի,
Ոչ Աստւածային, բարձր երկնքից իջնող հրաշքի։
Ամբո՞ղ դու ծնում ես այն անսահման զայրոյթը,
Որ հրաշէկ զառանցանքով անցնում է սահմանը
Եւ իւր հայեացքը՝ չքնաղ ինչպէս արշալոյսը,
Ցնորքների խորքից, ինչպէս հայրենիքի ցոլքը,
Սիրտդ է մտցնում երկնքից բաղդի հսկայ ղէմքը։
Երաղող ամբո՞ղ դու, քո խելագար թափով
Անվերջ ցանկալի մի նոր դարիշրջան ես
Կեանքի մէջ մտցնում, քո կոշտացած ձեռքերով,
Որին դու ինքդ գուցէ երբէք չը տեսնես...
Նա կաճէ գարնան չքնաղ ծաղկից աւելի,
Երբեներանգ գոյնով, գեղեցիկ ու հասարակ
Եւ մղձաւանջը՝ անցեալ արեան դարերի,
Կը ցրէ այնպէս, ինչպէս շերտերը ծխի
Հալւում են, կորչում երկնքիցը կապուտակ։
Եւ նոր կարգերը չեն լինիլ ինչպէս կեղև անհոգի,
Այլ գոյութիւնը ազատ, լուսաւոր, կենդանի կեանքի։
Նա պարզ տեսնում է այլևս մարդը
Իւր նմանի համար չի լինիլ գազան,
Որ ձեռք է բերում իւր իրաւունքը
Սուր ժանիքների ոյժովը միայն։
Չեն լինիլ դահիճք, վրէժ ու դատարան,
Բանկեր, պալատներ, ամրակուռ բանտեր...
Եւ նոր ձևերը բարոյականութեան,
Կը բերեն երկրին երջանիկ օրեր։
Անհոգի Աստւած՝ ոսկեզօծ հորթին
Մի կողմ կը նետէ հսկայ Ամբոխը
Իւր կուռ ու ամուր պատւանդանիցը,
Ցասկոտ զայրոյթի կարմիր օրերին...
. . . . . .
Նա պարզ տեսնում է. մեռած ընդմիշտ հպարտութիւն։
Նա գիտէ. ազատ ու պարզ կը լինի մարդկութեան կեանքը։
Իւր հունձն անելով անմեղ ու մաքուր սրտերում Սէրը
Որի նմանը չի տեսել երբէք խեղճ մարդկութիւնը,
Կը բացէ անկախ, ազատ, լուսաւոր մարդկանց աչքերը
Եւ ցոյց կըտայ նոցա իւր գաղտնիքների խոր-խոր ծալքերը։
Ապագայ կեանքի, դրախտ մտնելու անոտի յոյսով,
Եւ անմահութեան արժանանալու ցնորքներովը
Ամենքս ու իւր մէջ թագցրած «եսը» գոհացնելով,
Կենդանի կեանքը չի թունաւորիլ ողջ մարդկութիւնը.
Այլ իւր մէջ գտնւող կենդանի կեանքի չքնաղ ազբիւրը
Նա կը տարածէ ազատ, լայնարձակ, մինչ վերջին շունչը
Քանի որ նրա մէջ արիւնն է եռում ու միտքն է կենդանի,
Եւ մարդկանց վրայ, և արեամբ ցօղած խաւար երկրի..
Դարերի խորքից, աշխարհ կը նետւին
Նոր ու լուսաւոր կեանքի պատգամներ
Եւ խաւարի մէջ կը լուսաւորեն
Մարդկանցից անյայտ անթիւ գաղտնիքներ։
Իւր վիճակի հետ թոյլը հաշտւելով
Եւ մասնակցելով մարդկութեան ձեռքով
Կուով ստացած շատ բարիքների,
Հաշտ աչքով կը նայէ վրան իւր բաղդի։
Եւ կեանքի, ընթացքը դիտութեան լոյսի շաւղովը գծւած,
Մի օր կը լուծէ գաղտնիքը ծածկւած՝ թէ ի՞նչ է Աստւած..

Եւ այդ լուսաւոր հաւատով տարւած,
Բոցավառ հնոցի առջևը կանգնած,
Սևացած դէմքով, արձանի նման,
Միշտ լուռ է հանգիստ դարբինը՝ հսկան.
Կարծես կենդանի, պողպատ սրտերի շերտեր կռելով,
Զարկում է մուրճը ջլուտ բազուկի ուժգին թափերով...
Դարբինը կռում է և մուրճը զարկում,
Օրերի յետքից օրերն են անցնում
Ու տարիները միմեանց յաջորդում։
Եւ անթիւ շարքով պառկում են անշարժ գնդանի վրան,
Պողպատի շերտեր անվերջ լուսթեան և համբերութեան...

Վաղարշակ Թումանեան

Ա Ղ Թ Ա Մ Ա Ր

(Իր ողբալի հազարամեակի առթիւ, 915-1915)

Վասպուրականի վանքերու թագուհի, Արծրունեաց գեղակերտ ու հռչակաւոր մենաստանի, կաթուղիկոսանիստ Աղթամարի հազարամեակն է այս տարի։ Վասպուրականը համաերոպական պատերազմէն առաջ, մտադրած էր փառահեղ կերպով տօնել իր չքնաղագեղ ու ծովազարդ Աղթամարի հազարամեակը։ Աղթամարը պիտի վերածնէր իր նախկին փառքերով ու յիշատակներով, իր փառաց գագաթնակէտին պիտի հասնէր, բայց ողբալիօրէն հակառակը եղաւ։ Այդ հաղար տարեայ մենաստանը իր հարստութենէն զրկեցաւ և իսպառ ամայացաւ։ Այժմ միայն բւերը կը վայեն անոր աւերակներու վրայ։

Այս հռչակաւոր մենաստանի մասին նիւթական պարագք կը համարեմ քանի մը հակիրճ ծանօթութիւններ տալ «Տարազ»իրենթերցողներուն։

Բնական.—Վանայ ծովուն հարաւային կողմը-ցամաքէն քառաթի նաւակով, մէկ ժամ հեռաւորութեամբ, ծովուն մէջ բազմած է Աղթամար կղզին, որը Վանայ ծովու չորս կղզիներէն երրորդն է իր մեծութեամբ։ Իբրև կղզի Աղթամարը գինք չրջապատող ծովուն և բնութեան քմահաճոյքներէն ազատ մնացած չէ։ Ծովը տարւէ տարի բարձրանալով կլանած է անոր հողային մասերը և կղզին երթալով միշտ փոքրացած է ու կը փոքրանայ։ Կղզին հակայ կէտի մը կը նմանի որ հարաւէն ի հիւսիս ծովուն մէջ երկնցած է։ Կղզոյ հիւսիսային մասը ապառաժուտ է և կը վերջանայ բարձր քարաժայռով մը որ տեղական բարբառով «Բարձր քար» կամ «Քարի գլուխ» կը կոչուի, որը կրնանք կէտի գլուխը համարել, կղզին կէտի նմանցնելով։ «Քարի գլխու» մէջ կան բազմաթիւ բնական այրեր, յիշենք կարևորները, Աղաւնիի այր, Զգեստի այր, Ջեան այր և այլն։ Աղթամարի երկու սարկաւագները վերջին տարիներ գտան ուրիշ մեծ ու երկար այր մը, որու ելքն ու մուտքը երկու ժամ կը տեւէ և մարդս ահ ու սարսափ կըզգայ։ Այս բոլոր այրեր և ուրիշ բնական երևոյթներ կը հաստատեն որ Աղթամարը դարեր առաջ թերակղզի եղած է։ Կղզոյ հարաւային ծայրի (կէտի պոչը) ճիշտ դէմ ու դէմը ցամաքի ծովափէն կ'երկարի Ջար Մանաճիհր Ռշտունու հրւանդան կոչուած հողամասը, որ դարձեալ կը հաստատէ թէ Աղթամարը ցամաքի հետ կապուած էր։ Աղթամարի կղզոյ բուսականութիւն և գորշագոյն քարերը հանդիպակաց լեռներու բուսականութեան և քարերու նման են։

Կղզոյ հիւսիսային մասը բուսականութենէն զուրկ է։ Իսկ ասոր ծովեզերքը, որը թռչնոց աղբով ծածկուած և ծովու խոնաւութեանը միշտ ենթակայէ, բուսականութիւնը ճոխ է։ Հոս կը տեսնենք կարճահասակ վայրի ծառերու հոծութիւն մը։ Յիշենք քանիները, տեղական բարբառով։

Պտմի ծառ, ողկոյզաձև պտուղներ ունի որոնք աշնան կը հաւաքեն և աղրի մէջ պահելով կուտեն։

Տխմի ծառ. ունի կարծր փայտ և անուտելի պըտուղներ։

Պղիշկ. մանր և կուտաւոր պտուղներ ունի, աշնան կը հաւաքեն և չորցնելով կուտեն։

Խազիրաճ. պտուղը պղիշկին կը նմանի և ունի քաղցրաթթու հաճելի համ մը։ Բալալիւկ. թուփ մըն է, մանր ու կարմիր թթուաշ պտուղներ ունի։

«Բարձր քար» ի սիրտը ծածկուած է բազմաթիւ և բազմատեսակ թռչնոց ցախաշէն բոյներով. այս տեղ կը կոչուի Թռչոց քաղաք, իսկ աշտարակաձև ու բարձր քարի ցցուածք մըն ալ Թռչնոց ժամ, ուր ամէն իրիկուն կը հաւաքուին թռչունները և կ'երգեն իրենց ալէլուն։ Թռչուններու ջրային և ցամքային տեսակները 25-30 ի կը հասնի, հետաքրքրութեան համար յիշենք անոնց անուններըը։ Կարապետիկ, Մանգաթևիկ կամ Մանգաղաթևիկ, Արօր, Խէց-խէց, Եղունիկ Անձեղ, Ճաւեղ, Ճայեկ, Կռիկ, Սև-կռիկ, Ձնճղուկ, Սագ Բադ և այլն։ Մանգաթևիկ տարօրինակ թռչուն մըն է գիշերները տեղ մը խարոյկ տեսնելուն պէս ինքզինքը մէջ կը ձգէ կարծելով թէ ցերեկ է։

Կղզիին մէջ կան նաև 50-60 վայրենաբոյս և մարդոց անմատչելի կատուներ, շատ մեծութեամբ, սև ճերմակ և մոխրագոյն։ Այս կատուները կը սնանին օձերով և թռչուններ որսալով։ Օձեր ուտելէ յետոյ իրը թոյնթափ կ'ուտեն Թորթիկ կոչուած թանձրատերև, մանր կապոյտ ծաղիկներով բոյս մը։ Վանականները կը պատմեն թէ երբ ձմեռը կատու մը օձ կուտէ Թորթիկ չը գտնելուն համար կը սատկի։ Այս կատուները ամրողջ ամառ կը թափառին կղզոյ մէջ, իսկ ձմեռը վանքը կուգան և կը կերակրուին վանականներէն։

Կղզիին կլիման բարեխառն ու հաճելի է. ամառը շատ տաք և ձմեռն ալ սաստիկ ցուրտ չ'ըներ։ Ձմեռ կղզոյ վրայ միշտ կանաչութիւն կայ։ Կղզոյ հիւսիսը բարքարուտ և անմշակելի է իսկ հարաւային մասը հողային է և տափարակ։ Ազնիւ է այստեղի խաղողը, կան նաև անագին քանակութեամբ նշենիներ և ծիրանի ու խնձորի ծառեր։ Կը մշակուին բանջարեղէններ և ծաղիկներ։ Կղզոյ բուսականութեամբ 60 հատ ոչխար կրնայ պահուիլ։ Հաւեր և ընտանի աղաւնիներ պահելն ալ դիւրին ու շահաւէտ է։

Աղթամարը անուշ ջրէ զուրկ է, թէև կան երկու ջրհորներ բաւական յատակ և պաղ ջրով, բայց քիչ մը աղիահամ են։ Տարիներ առաջ ձիւնամբարներ եղած են որոնց ձիւնը հալեցնելով կը խմէին։ Այս դրութիւնը կայ Կատուց և Լիմ անապատներու մէջ։

Աղթամարի մէջ առաջ անուշ ու պաղ ջրի աղբիւր մը եղած է, որ յետոյ ծովակուլ կըլլայ։ Այս աղբիւրի մասին Արծրունեաց պատմագիր Թովմա Արծրունին հետևեալը կըսէ, «Եւ զծառատունկս բազումս, որ առագնալ արբուցանեն ի բարեհամ և անապատ աղբերէն որ ակնարկելով խնամողին Աստուծոյ կայ ի մէջ քաղաքին»։ (Աղթամարայ)։

Աղթամար կղզիի շրջակայքը տեղական մակոյկով 50 րոպէի մէջ կը պտուի։

Պատմական.— Աղթամարը ամենահին ժամանակներէն ի վեր Ռշտունեաց հզօր նախարարութեան գլխ. ամրոցներէն մէկը եղած է։ Ռշտունեաց նահապետներէն Ռաշամը առաջին եղաւ որ այս կղզին ամրացուց պարիսպներով։ Տիգրան Բ. Մեծի օրով Բարդափրան Ռշտունին աւելի ամուր շինութիւններով ամրացուց Աղթամարը և Պաղեստինէն բերած գերի հրէաները հոն բնակեցուց, կղզուն աւանի մը ձև տալով։ Է-րդ դարուն, Թէոդորոս Ռշտունին իբրև ամուր և ապահով տեղ, Աղթամարը ընտրեց, արա-, բական արշաւանքներուն դիմադրելու համար։ Բայց ամենքէն աւելի Գագիկ Արծրունի գործաւ ու ճանչ-

Աղբմ. Ս. Խաչ վանքը
հարաւ արեւել. կողմէն

Աղթամարի բարձրաքանդակներէն
Ադամ-Եւան Դրախտի մէջ
Վանքի հիւս. պատին վրայ

Աղբմ. Ս. Խաչ վանքը
հիւսիս արեւմտ. կողմէն

ցաւ Աղթմ, արժէքն ու դիրքը և անոր ռազմավարական ահագին նշանակութիւնը։ Դագիկը կղզւոյ չորս կողմը շրջանակաձև կտրեց, ցամաք դարձնելու համար։ Երկրի բոլոր բանւորները այս հսկայական աշխատանքով զբաղեցնով, քիչ ժամանակի մէջ յաջողեցան ծովու որոշեալ տեղերը ցամաքի վերածել։ Ջուրի մակերևոյթէն 5 կանգուն բարձր հսկայ ամբարտակ մը բարձրացաւ «իբր ձիարշաւօք հինգ. և պարսպէ հրաշակերտ, ահեղակերտ բարձրաբերձ, լայնանիստ բրգամբք և բարձրացեալ աշտարակօք զարդարեալ» կըսէ Թովմա Արծրունին։ Դագիկ շինել կուտայ «շեմարանս մեծամեծս և համբարանոցս, միանգամայն և տունս գանձուց և զինուց և ասպազինաց անհուն բազմութեանց»։ Այս բոլորէն յետոյ Դագիկ Արծրունին «հրաման տացէ զի լինիցի տեղիս ապաստանի ամենայն հինից ի թշնամեաց եկելոց»։ Ուրեմն Աղթամարը Ապասաանի խառնիճ կըլլայ։ Դագիկ Արծրունին Աղթամարը ամրացնելէ և բազմամարդ դարձնելէ յետոյ կը հրամայէ շինել տաճար մը։ Ինքը Դագիկ քանդել կուտայ Բաղէշի մօտ գըտնուած, կոտոմ հայաբնակ գիւղի Ջուարարիկ կոչուած կամպաշտ ցեղի տաճարը և քարերը փոխադրել տալով Աղթամար, կը շինէ այդ հսկայ և գեղակերտ եկեղեցին։ «Եւ է կարգ շինուածոյ տաճարին ահեղ իմն և զարմանալի և այնքան բարձրագոյն և անհաս է մտաց»։ Տաճարի շինութեան մէջ կը գործածւի 200,000 լիտր երկաթ։ Մանուէլ ճարտարապետը իր բոլոր տաղանդը ի գործ դրաւ այդ տաճարը փառապանծ և գեղեցիկ դարձնելու համար։ Տաճարի գմբէթը ոսկեայ թիթեղներով կը զարդարւի։ Վանքի դռները ոսկեպատ ու արծաթազարդ կ'ըլլան։ Վանքի դրսի պատերը զարդարւած են հին ուխտիի պատմական դէմքերու և տեսարաններու բարձրաքանդակներով։ Պատերու վրայ բարձրաքանդակւած են նաև, Դագիկ Արծրունին, Համազասպ և Սահակ Արծրունիներ, և ուրիշ հայկական դէմքեր։ Ասոնցմէ զատ գմբէթն ու պատերը ծածկւած են կենդանիներու, թռչուններու, բոյսերու և զանազան բարձրաքանդակ նկարներով ու զարդերով։ Բաղցրախօս Թովմա Արծրունին թող նկարագրէ բարձրաքանդակները. «Են ինձա ոսկեզարդ գահոյք, յորս բազմեալ երևի արքայ նազելի ճոխութեամբ, շուրջ զիւրեաւ ունենալով պատանեակս լուսատեսակս սպասաւորս ուրախութեան, ընդ նմին և դասս գազանաց և խաղս աղջկանց զարմանալոյ արժանիս. անդէն և սուսերամերկաց հոյլք, և ըմբշամարտաց պատերազմունք. անդ և դասս առիւծոց և այլոց գազանաց. և անդ երամս հաւուց զարդարեալք ի պէս պէս պաճուճանս»։

Աղթ. Ս. Խաչ վանքի յատակագիծը խաչաձև է. եկեղեցին բարձր ու հսկայանիստ, ամբաշէն և գեղակերտ։ Եւրոպացի այցելուները հիացած են անոր ճարտարապետական արժէքի և կառուցւածքի վրայ։ Տաճարին ներսի մասը զարդարւած է նոր ուխտիի պատկերներով, Յիսուսի կեանքը իւղաներկ նկարներով կը պատկերանայ հոն։ Վանքի ներսը, հարաւային կողմը պատշգամբի ձևով շինւած է Արծրունի թագաւորներու աղօթատեղին։

Աղթամարը քիւրդերու աչքին շատ մեծ նշանակութիւն ունի որու համար ալ կ'ըսեն «Տէրէ Աղթամարէ, Թումբէթէ Ոստանէ ու Փըրէ Պաթմանէ կէաթ խարապ նա տըպէ հա՛տ ախր զամանէ», այսինքն «ժամն Աղթամարին, Գմբէթ Ոստանին և Կամուրջ Պաթմանին, չը պիտի քանդւին մինչև ց'օրն վերջին»։

Աղթամարի *) Ս. Խաչ վանքի շինութիւնը վեց տարի կը տևէ, 915—921 **)։

Երկու խօսք ալ Աղթամարի կաթուղիկոսութեան մասին։

XII դարու սկիզբները Հայաստանը քաղաքական փոթորկալից շրջանի մէջ կը գտնւէր։ Էջմիածնի և Կիլիկիոյ հայրապետական գահերը օտարազգի իշխանաց ձեռք, վաճառքի առարկայ դարձեր էին։ Այս առիթէն օգտւելով Աղթամարի Դաւիթ արքեպ. Թոռնիկեանը տեղային իշխանութիւններ և կրօնական դասը իր կողմը գրաւելով կը յաջողի կաթուղիկոս ընտրւիլ։ Այս ապօրինութեան համար Կիլիկիոյ Գրիգոր Պահլաւունի կաթուղիկոսը Սև Լերան ժողով կը գումարէ և կը նզովէ Աղթամարի կաթողիկոսութիւնը։ Բայց Թոռնիկեանը իր զօրաւոր համակիրներու, մոլեռանդ ժողովրդեան և Աղթմ. նշանաւոր մասունքներու շնորհիւ կրցաւ պահել Աղթամարի կաթողիկոսութիւնը որ տևեց մինչև մեր օրերը և գերիշխան է Էջմիածնի կաթողիկոսութեան։ Աղթամարի վերջին կաթողիկոսը Խաչատուր Բ. Շիրօեանն էր, որը իր կաթուղիկոսու-

*) Աղթամար անուան ճիշդ ստուգաբանութիւնը մինչև այժմ դեռ գտնւած չէ։

**) Գ. Ատրպետը «Տարագի մէջ (1915 թիւ 6-7) Աղթամարի շինութեան թւականը 930 կը համարէ։ Ծ. Ե.

Թիւնը դարձեալ անիրաւութեամբ ձեռք բերաւ, սպաննել տալով իր նախորդը, Պետրոս Բիւլբիւլ Փշալանքցին։

Աղթամարը ունեցած է անսահման հարստութիւն, եկեղեցական սպասներ, զարդեր ևայլն։ Ջը նայած յաճախակի կողոպուտներուն, Աղթամարը դարձեալ թանկագին անօթներ և սպասներ ունէր վերջերս։ Կղզոյ ճիշտ դիմացը ծովափին վրայ է Աղթամարայ «Դրսի տուն„ը, Ախավանքը, ուր կայ երկյարկանի գեղեցիկ դպրոց մը, վեհարան, մատուռ, սենեակներ, տնտեսատուն, ջրաղացներ, ձիթհան, ամբարներ և դրախտանման, գեղեցիկ ու բարեբեր այգի մը։ Ռըշտունեաց, Հայոց-Ձորի, Մոկաց, Կարճկանի, Շատախի, Նորտուզի, Խիզանի, Սպարկերտի և Մամըռտանքի բոլոր գիւղերն ու վանքերը Աղթամարի թեմին կը պատկանին։ Վանքը ունի 1500-ի չափ վարելու հողեր։ 1910-11-ին ունէր 2000 ոչխար, 50 եզ, 20 գոմէշ, 30 կով, 20 ձի ևայլն։

Աղթամարը եղած է նաև Վասպուրականի բարոյական կեդրոններէն մէկը։ Հազարաւոր ձեռագիրներ, (որոնք այժմ բոլոր գողցած ու ցան ու ցրիւ եղած են) կոնդակներ և ուրիշ գրքեր կային հոն։ Գրիգորիս Աղթամարցին և Թովմա Արծրունին Աղթամարի մէջ ապրած ու սովրած են։ Բազմաթիւ եպիսկոպոսներ և վարդապետներ, Աղթամարի շնորհիւ դիրք ու պաշտօն գտան զանազան կողմեր։ Աղթամարի մէջ կան բազմաթիւ բեւեռագիր յիշատակարանները, և եթէ պեղումներ կատարւի դեռ շատեր երևան կելլեն։ Կղզոյ հարաւակողմն է «Րաֆֆիի ժարբ» որու վրայ նստելով Րաֆֆին երգած է իր «Ձայն տուր ով ծովակ»ը։ Աղթամար այցելած են օտարազգի և հայ բազմաթիւ հնախոյզ-գիտնականներ, բանասէրներ և ուղևորներ, այսպէս։ Շուլց (1828), Ն. Ս. Ռուսիքով, Սէն-Մարթէն, Վիթալ-Քինէ, Տէրօյլ, Հ. Ֆ. Պ. Լինչ (1898), Օսվալտ, Պելք, Լէհման, Պրքըսթըն եղբ., Արամ Րաֆֆիի հետ, (1913), Օլգինին (ռուս Թղթակից 1912) Ֆէսրէլիև (Վանի ռուսական նախկին հիւպատոս 1910) Խրիմեան Հայրիկ, Սրուանձտեան, Հ. Ներսէս Վ. Սարգիսեան (1845), Արիստակէս վրդ. Դէւկանց, Ղևոնդ եպ. Փիրղալէմեան, Յովհ. Բարաղամեան, Ա. Լևոնեան, Ե. Լալաեան (1910) Յ. Օրբէլի (1912), Ա-զօ, Ա. Վռամեան, Վահան Փափազեան, Տ. Զէօկիւրեան, Փ. Թէրլէմէզեան, Յովհ. Զարիֆեան (իր խումբով) Յովհ. Թումանեան, Սեդրաք Դէւկանց և այլն։

Աղթամարը Վասպուրականի հին ու նոր պատմութեան փառքի թանգարանն է։ Այս հռչակաւոր մենաստանի լիակատար և մանրամասն ուսումնասիրութիւնը դեռ մինչև այժմ չկայ մեր մէջ։ Թէև վերոյիշեալ բանասէր-ուղևորներու մեծ մասը ուսումնասիրած է Աղթամարը, բայց բոլորն ալ պակասաւոր են։ Վանեցի բանասէր Խ. Լևոնեանը գրած է «Աղթամարի կաթուղիկոսութեան պատմութիւնը» որ Իզմիրեանց մրցանակով պսակուած է։

Եւ այս հռչակաւոր վանքը, այժմ անտէր անտիրական, ամայի ու անմարդաբնակ կը հանգչի իր սիրած ծովու մէջ։ Անոր հազարամեակը արիւնով ու կրակով, սուգով տօնւեցաւ։

Բայց, չքնագե՛ղդ իմ Աղթամար, Հայաստանի վերածնութեան նախօրեակին բազմաչարչար հայութիւնը փառքով ու հպարտութեամբ պիտի տօնէ քո փառաւոր, պատմական, յիշատակալից ու քաղցր հազարամեայ յոբելեանը։

ՀԱՑԿԱԶՈՒՆ

ԹԵՐԹԵՐ ԻՄ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

ԱՆՑՔԵՐ ԵՒ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ, ՄԱՐԴԻԿ ԵՒ ԴԷՄՔԵՐ

I

Ա Յ Գ Ի Ն

Այդ այգին այլևս չէր «Սալխինօ» կամ «Ակադիւմ», ուր մինչև առաւօտ հիւրասիրում էր հաստատուն ցականը, իր հիւրերից մէկին տան առնելով, ուր մինչև առաւօտ հնչում էր զուռնան, ուր սոխակների տեղ ճըկճըկում էին գիշերային թիթեռնիկները, ուր տիրում էր քէֆը, շինծու սէրը ու վավաշոտ կիրքը, ուր ապականում էին առանց այդ էլ ոտից մինչև գլուխ փչացած երիտասարդները...ոչ այդ այն չէր...

Մի տեղ կանայք խնդրում էին բրինձը շիլայի համար, միւս տեղ մեծ պղնձում (սամովարում) եռում էր ջուրը թէյի համար, մի այլ պղնձում եփւում էր մատաղի միսը, որի ջրում պէտք է պատրաստւէր շիան։ Թխում են լաւաշը... ցականի հետքն անգամ չկար։ Նրա տեղ, դէմքը հոգսերով ծածկուած շրջում էր Տիգրան Նազարեանը, սրան ու նրան պատուէրներ տալով, հիւրերին սիրալիր ընդունելով ու ամենքի համար մի մի պատշաճ նախադասութիւն գտնելով։ Ոչ դա վերոյիշեալ այգիներից և ոչ մէկը չէր, դա էր «Հրատապ սփոփանք Մայր Հայաստանցիներին»...

II

ՄԱՅՐ ՄՏԱՆ ԱՐԵՒՆԵՐ

Նոյեմբերի 15-ն էր։

Օրը հրաշալի էր։ Արևը այնպէս էր փայլում, ինչպէս փայլում էր հայ բեմի վրայ Աստղիկը, նա այնպէս տաքացնում էր, հղողներին, ինչպէս Թատրոնական դահլիճի հասարակութեանը տաքացնում էր իր ոգեւորւած և մտածւած խաղով Աստղիկը, նա այնպէս արագ վազում էր դէպի արևմուտք, ինչպէս շտապ վազեց դէպի գերեզման հանճարաւոր Աստղիկը... ՛ուր ՛ուր, ինչի էք փութանում, անմիտներ, ՛ինացէք մեզ մօտ... տաքացրէք մեզ, սփոփեցէք մեզ, ոգևորեցէք մեզ դեռ կը հասնէք մայր մտնելուն, քիչ ՛ինացէք մեզ մօտ։ Նայեցէք, մենք մկրտում ենք...

III

ՓՈՔՐԻԿ ԱՍՏՂԻԿԸ

Մշեցի քահանան, 41 տարեկան, իսկական տղամարդ, չար ու բարի տեսած, որը լեռները բարձրացրած, հրացանը ձեռքին առաջնորդել էր իր ծուխի ՛ինացորդներին, լեռնային կիրճերից ու լանջերից նրանց ուղևորելով, որի կնոջը և չորս զաւակներին այրել էին թիւրքերը, կարծես և ոչ մի վիշտ չը տեսած, բազկատարած կանգնած է աւազանի առաջ և կատարում է մկրտութեան խորհուրդը... Իսկ կնքահայրը և կնքամայրը՝ Յ. Աբելեան և տ. Սիրանոյշ և հայ դերասանական խումբը, որ նրանց շրջապատել է։ Մեր այդ չարաճըճի խումբը, անհանգիստ, անզուսպ, անհնազանդ... «մենք չունենք, բայց ուզում ենք ունենալ, որպէսզի տանք։ Մենք կարիքներ ունենք, բայց աւաղ կամենում ենք մերայինների կարիքները բաւականացնել... հազար ռուբլի մեղ համար մեծ գումար է, բայց մենք նախապատւում ենք տալ այդ գումարը Շամախու երկրաշարժից ՛լասվածներին, 1000 ր. մեզ համար լաւ գումար է,

բայց մենք նախադասում ենք տալ այդ գումարը փախստականներին... Անզուսպ, անհանգիստ, անհնազանդ մարդիկ...

Այսօր նրանք խմբովին կանգնած են աւազանի շուրջը... նրանք մկրտում են հայ փախստականի աղջկան... նրանք յիշել են իրենց տաղանդաւոր ընկերուհուն Աստղիկին և մանկանը տալիս են Աստղիկ անունը։

Ծելացի, գեղեցիկ մանուկը յենւել է կնքահօր հզօր բազուկների վրայ, իր կեանքը ու գոյութիւնը նրան է հաւատացել, իսկ կնքահայրը, որ հարկ եղած ժամանակ գուցէ ջաղջախէր ուժեղներին, դողդողալով կրում էր մանկանը, երկիւղալով փշրել նրան։ Տ. Սիրանոյշ փաղաքշում է նրան, որ պատրաստւում է ստանալ իր քրոջ անունը, դնում է նրա ձեռքը բամբակը միւռոնով ու երեխան սեղմում է մատիկները ամուր պահելով միւռոնը։ Ամէնքը զգացւած են...

Երեխային շարական ասելով տանում են փախստականների համար նոր կառուցւած աղիւսաշէն շինութիւնը, ուր կնքահայրը տալիս է փոքրիկ Աստղիկին մօր գիրկը...

IV

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ ՕՐ. ԱՍՏՂԻԿԻ

Մկրտութեան խորհուրդը հաղիւ կատարած վերջացրած, նոյն քահանան տխուր հայեացքը երկնքին ուղղած հոգեհանգիստ է կատարում հանգուցեալ դերասանուհի օր. Աստղիկի։ Ժողովուրդը շրջապատում է սեղանը, ամէնքի աչքերը արտասուքով են լցւել։ Ես նայում եմ ջահել դերասանուհիների դէմքերին, նրանք չեն տեսել օր. Աստղիկին, թէպէտ և արտասւում են, նայում եմ իմ ծեր ընկերուհուս Զապէլին, նա հեկեկում է, նա լաւ յիշում է հանգուցեալ դերասանուհուն... Ամիրջանը երգում է «Ի վերին Երուսաղեմ» Տ. Սիրանոյշը յորդ արտասուքներ թափելով, շարժում է շրթունքները, նա աղօթում է վաղամեռ քրոջ համար... Քահանան յիշատակում է «Զհոգիսն հանգուցեալ դերասանուհի Աստղիկի ու հատոյց հին ու նոր ննջեցեալ հայ դերասանուհիների եւ դերասանների»։

V

ՄԵԾ ԱՍՏՂԻԿԸ

Այսօր դարձեալ բուում է ծեր բուն... բու, բու, բու... Արի տեսնեմ քեզ իմ վաղեմի բարեկամ, անցքերի ու մարդկանց անդուկ իմ թողոտ ու փոշոտ, խունացած յիշատակարան... ես կամենում եմ այսօր պոռալ իմ բարեկամուհուս, Աստղիկի գերեզմանի վրայ ես կամենում եմ յիշել մեր կարճատև բայց մեծիմ բարեկամութիւնը... «Առաջին դէբիւտը քոյրերի ինձ վրայ շատ վատ տպաւորութիւն գործեց... Ամատունու մասնաժողովը պէտք է թոյլ չը տար այդպիսի դէբիւտ որ իսկապէս...» ես չեմ կամենում այդ կտորը առաջ բերել, ես յարգում եմ և օր. Աստղիկի ու մասնաժողովի հանգուցեալ անդամների յիշատակը...

«Ես շարունակում եմ ներկայ լինել հայ ներկայացումներին, իբրև Մշակի րեցենզէնտ։ Քոյրերը հետզհետէ կատարելագործւում են։ Անցեալ օրը ես ներկայ էի ռուսաց խմբի ներկայացմանը։ Խաղում էին «Քոյր Թերեզա»։ Վերնագիր դերը կատարում էր Նէմերովա-Թալֆ։ Ներկայ էին այսօր, Աստղիկ ու Սիրանոյշ ու պ. Ադամեան։ Օրիորդների համար դա լաւ շկօլա է։ Քոյրերը հարուստ տեւեալներ ունին։ Ես շատ ուրախ եմ, որ նրանք այցելում են ռուսաց ներկայացումները։ Ադամեանի հետ սիրալիր ողջունեցինք։ Սրա հետ սկսում ենք բարեկամանալ, եթէ կարող է բարեկամութիւն լինել մի րէցենզէնտի և մի առաջնակարգ դերասանի մէջ։ Նրա մասին ես շատ խիստ եմ գրում, բայց այդ չը խանգարից նրան հիւրասիրել ինձ Ալէքսանդրեան այգիում Շհնինգի պավիլիօնում երկու թաս վերմաւտով, իւրաքանչիւր թաս 40 կ. արժէ... Մենք խմեցինք 4 թաս, նա վճարեց հրամել վերմաւտը 4. 60 կ. ծառային 40 կ. ի՛նչ...» բառը հակացինզուրական առաջ չեմ բերի...» այսօր անտրակտում ես նրան հիւրասիրեցի ռուսական դառնով»

Անցան երկու թատրոնական սէզօններ։ Քոյրերը հետզհետէ կատարելագործւում էին և իւրաքանչիւր ներկայացմանը ապացուցանում էին, որ նրանք խոբապէս ուսումնասիրում են բեմը։ Ես դեռ ես քոյրերի հետ ծանօթ չէի։ Թէպէտ երբ հկան Տ. Հրաչեայ, օր. օր, Դարագաշներր, Մարի-Նւարդ և Մնակեան մենք այնքան բարեկամ էինք, որ ամեն օր տեսնւում էինք կամ ինձ մօտ կամ նրանց մօտ...

VI

ՕՐ. ԱՍՏՂԻԿԸ ՄՇԱԿԻ ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ

Առաւօտեան ժամի 12-էր։ Մշակի խմբագրատան, իմ գրասենեակ մտաւ օր. Աստղիկը։

—Պ. Տէր-Գրիգորեան, թոյլ տուէք ինձ ծանօթանալ ձեզ հետ։ Թէպէտ մենք միմեանց ճանաչում ենք, բայց պաշտօնապէս ծանօթ չենք։

—Օրիորդ, դուք ինձ մեծ պատիւ էք անում, ես ոտքի ելայ ու խնդրեցի օրիորդին նստել։

—Ես ձեզ մօտ գործով եմ եկել..

—Գաղտնի գործով...

—Ոչ ոչ, ծիծաղից նա..

—Ուրեմն անցնենք պ. Արծրունու գրասենեակը։

Մենք անցանք

—Պ. Արծրունի, թոյլ տուէք ձեզ ներկայացնել օր. Աստղիկը։

—Ամօթ, մեծ ամօթ մի րէցէնզէնտի համար, որ երկու սեզօն գրում է մի դերասանուհու մասին և նրա հետ ծանօթ չէ...

—Եւ մի դերասանուհու համար, որ ծանօթ չէ իր րէցէնզէտի հետ, ընդմիջից օրիորդ Աստղիկը...

Մենք կէս ժամից աւելի խօսում էինք Արծրունու գրասենեակում։

Օրիորդը ինչ ինչ անբաւականութիւններ էր ունեցել, պիտի մեկնէր Թիֆլիսից դուրս ներկայացումն պէտք է տար, որին մասնակցելու համար խնդրում էր ինձ և Տէր-Գրիգորեանին։ Մենք իհարկէ ուրախութեամբ համաձայնեցինք և թէպէտ անբաւականութիւնների մանրամասնները ինձ յայտնի էին, բայց ես աշխատեցի անգամ չակնարկել նրանց մասին, ամենաքաղաքավարի կերպով նրանց քօղարկելով։

Ներկայացումը թէ մուտքի և թէ խաղի կողմից շատ յաջող անցաւ ու մի երկու օրից օր. Աստղիկը ուղևորւեց Կ. Պօլիս այլևս չվերադառնալու համար։

Երկաթուղու կայարանում ես և տ. Տէր-Գրիգորեան նէիրեցինք նրան մի շքեղ ծաղկեփունջ, ամբողջովին վարդերից. յակինթներից ու Ջիս մի մռւռանայ ծաղկից փնջած։ Օրիորդը ընծայից մեզ իր պատկերը հետևեալ գրութեամբ «Իմ անմոռանալի միակ բարեկամ Տէր-Գրիգորեան և ամուսիններին. Աստղիկ. օր. Ամպէր Քանթարջեան»։

Ուղի գյողնների թիւը շատ քիչ էր, մենք էինք Գաբրիել Սունդուկեան և մի քանի ուրիշները։

—Ծտեսուքիւն, ցտեսուքիւն, կրկնում էր նա, գլուխը կրծքին յենած և դառն արտասուքներ թափելով։

Ծտեսուքիւն կարճօրեայ բարեկամուհի, ցտեսուքիւն... Միշտ չի բուայ ձեր բուն, նա էլ կը հասնի քեզ և իր հետ կը բերի իր անվերջ ու սոսկալի վիշտը թողարկած մշտական ախտադով և անզուսպ կատաղով...

Յ. Ձէր-Գրիգորեան (Վանս)

Այգեկուրծը Ջանպաճիայի վրայ

ՆՐԱՆՔ ԶԳԱՑԻՆ

Փոխրիկ դրամա երեք գործողութեամբ. Ֆաճիազի թատրոնների համար

Հեղ. ՇԱՐԼ ՎԱՆ ԼԵՐԲԵՐԳԻ ՄՕՐԻՍ ՄԵՏԵՐԼԻՆԿԻՆ

Նուագախումբ. Թաղման քայլերգ. Թմբուկի խուլ դարկեր հեռուում փողի ձայն. Թմբկի զարկեր. օրդանը նուագում է եկեղեցական մի փոքրիկ մօտիւ. Անդատրում և խուլ հարւածներ։

Վարագոյրը բարձրանում է։

Բեմը ներկայացնում է մի շատ աղքատ տնակի սենեակ. աջ կողմը պատին թեքած է մի մահճակալ, որը ծածկւած է սև վարագոյրներով և հովանիով։ Միջում դուռ. ղէպի ձախ պատուհան բաց թողնւած ծածկոցով.մահճակալի մօտ փոքրիկ աթոռ, որի վրայ դեղին մոմի երկու վառած ճրագների միջև դրւած է Քրիստոսի Աչելութիւնը։

Փոխարկալի դիշեր. անձրևը խփում է ապակիներին. հեռւից ծառերի միջից լսւում է քամու սուլոցը և շան հաչոցը. բեմը լուսաւորւած է երկու, հազիւ նշմարելի լոյս ուղղ մոմերով. վարագոյրը բարձրանալու ժամանակ, թւում է թէ բեմը դատարկ է.. դուռը ծեծում են. երիտասարդ աղջիկն մահճակալից շեչտակի վեր է կենում արտայայտելով իր բոլոր շարժուձեների մէջ սարսափ. Նա կիսահագնւած է՝ վերնաշապիկով և հերաբաճակ։

Ա. ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

ԴՈՒՍՏՐԸ.—Ո՞վ է այնտեղ
ՁԱՅՆԸ.— (դրսից) Ես եմ
ԴՈՒՍՏՐԸ.—Ո՞վ էք դուք.
ՁԱՅՆԸ.—Ես եմ։
ԴՈՒՍՏՐԸ՝).—Այդ անունն չէ. ով էք դուք.
Զ.—Ա՜խ, դէ... ես մարդ եմ, դուք այդ լաւ գիտէք։
Դ.—Ես ոչ ոքի չեմ սպասում։
Զ.—(մահճակալից) Դատրիկս, այդ ինչ աղմուկ է.
Դ.— Քամին է այդ մայրիկ։ Դուք ինձ մօտ էք եկել։
Զ.— Հասկանալի է, որ ոչ ձեզ մօտ, փոքրիկս։
ՄԱՅՐԸ.— Ո՛չ, իրօք ես լսում եմ ինչ որ բան։
Դ.— Մինչև չասէք ձեր անունը, ես դուռը բաց չեմ անի։
Զ.— Դէ՜... դէ՜... այդպէս չի կարելի խօսել։ Ես մարդ եմ և ունիմ հետս ջուր։
Դ.— Մա՞րդ, ջո՞ւր։
Զ.— Այո, լսեցէք. (լսւում է թափւող ջրի խլխլոց)։
Մ.— Դատրիկս, ջրի ձայն եմ լսում. այնտեղ ինչ որ բան թափւում է
Դ.— Մա՞րդ, ջո՞ւր։
Զ.— Այո և սպունգ.
Դ.— Սպո՞ւնգ... ինձ այդպիսին պէտք չէ։
Զ.— Ներեցէք փոքրիկս, ներեցէք, ներեցէք... այդ լւացւելու համար է։
Մ.— Ո՞վ է այդ, դատրիկս։
Դ.— Մայրի՛կ... այդ... աղքատ է... աղքատ... ողորմութիւն է խնդրում։
Մ.— Ա՜հ... դէ՛ ողորմութիւն տուր նրան. խեղճ է, թող ներս գայ հանգստանայ։ Այդպիսի գիշերով։ Ա՜խ Աստուած իմ։ (դուռը ծեծում են)
Դ.— Ո՛չ մայրիկ, ես վախենում եմ, քչի՛րը կարող են գալ։
Մ.— Լաւ չես խօսում, լաւ չէ, պէտք է դուռը բանալ. հաց տուր. (դուռը ծեծում են)

Դ.— Ոչ՛ մայրիկ, ես վախենում եմ գիշերով եկողներից. գուցէ այդ քա՛յլ է։
Մ.— Դատրիկս պէտք է բանալ, լսո՞ւմ ես, հարկաւոր է բանալ։ Ո՞վ է այդ տեղ. (ժպտալով) ախ մայրդ շատ լաւ գիտէ, թէ ով է այն. Նա ճանաչում է այդ ձայնը։ (դուռը ծեծում են)
Դ.— (յուզւած) Դու գիտե՞ս ով է այդ։
Մ.— Ինչպէս չէ. ով կարող է լինել եթէ ոչ մեր բարի տէրը. նա գիշերն որսում. և ահա նա կամեցել է ուտել, խմել. յոգնել է, բաց արա՛ դուռը դատրիկս բա՛ց շուտով. ես լսում եմ նրա սև ձիերի դոփիւնը։ (Հեռւում ձիաների դոփիւն)
Դ. Այդ ինչ աղմուկ է, դուք մենակ չէ՞ք։
Զ.— Հասկանալի է, որ ես մենակ եմ և ոչ մի աղմուկ էլ չկայ... ա՜խ, այս... դուցէ, ճիշտ այնտեղ ներքևում... այդ ինձ հետևողների ձայնն է, բայց դեռ բաց արէք։ (դուռը ծեծում են)
Դ.—Հեռացէ՛ք։
Զ.—Այդպէս, դուք չէ՛ք կամենում բաց անել։
Դ.—Ես ոչ մի ժամանակ բաց չեմ անի։
Զ.—Դէ՛ լաւ, ես կըսպասեմ։
Մ.—Դատրիկս, բոլորն ասում են վաղը, վաղը, այո՛, բայց կրկի՛ն, կրկի՛ն ով է այնտեղ. Նա կամենում է սպասել։ Այն ինչ որ չգիտէ մէկը գիտէ միւսը, ինչ որ չի տեսնում մէկը, տեսնում է միւսը և այդ մեծ մեղք է, անմտութիւն... այդպէս դատրիկս, նա գնացի՛ է, ինչո՞ւ այլևս չեմ լսում նրա ձայնը։
Դ.—(ճայելով դուռն) Այո՛ մայր... այո՛... այո... նա գնացել է։
Մ.—Ա՛խ Աստուած և սուրբ կոյսը նրան պահեն... ինչ վատ հոգնակ է դուրսը... արի դատրիկս գիշերայ այս պահին աղօթենք այդ խեղճի համար և ասենք «հայր մերը». Յաչելութիւնը մի քիչ թեթեր դէպի ինձ, ահա այդպէս... այդպէս։
(Լսւում է ինչպես երկու կին աղօթք են մրմնջում. լըսւում է պառաւի ձեռքի համրիչի ձայնը. անձրեւը խփում է պատուհանին։

Դանդաղօրէն խփում է ժամի 10-ը. լսւում է շան հաչոցը. դուռը հանգցնում է մոմերը. բեմը մութ է։)

Բ. ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Հեռւից լսւում է փողի ծայն. բրկահարութիւն օրգանը նւագում է. անդադրում զարկեր. մոմեր դրձեալ վառւած. երեւում է ինչպես ջահել աղջիկը կանգնած է մահճակալի մօտ աճապարժ սպասողական դիրքով, դէմքը դարձած դռանը։ (դուռը ծեծում են)

Դ.—(բաիով դէպի դուռը դառնալով) Դէ լսեցէք ... դէ լսեցէք, մայրս քնած է այժմ։ (դուռը ծեծումեն)

Զ.—(դռսից) Այդ միևնոյն է։

Դ.—Դուք ասացէք որ կը սպասէք։

Զ.—(frfիջով) Ե՞ս, ես հէնց նոր եկայ.

Դ.—Ի՞նչ, մի՞թէ քիչ առաջ դուք չէիք այստեղ։

Զ.—Իհարկէ ես չէի.

Մ.—Դստրիկս, ես աղմուկ եմ լսում։

Դ.—(դէպի դուռը) Այդ ճիշտ չէ։

Զ.—Ահա թէ ինչ.

Մ.—Դստրիկս, ես շշնջոց եմ լսում, այնտեղ ինչ որ բան շարժւում է.

Դ.—Ո՞վ էք դուք։

Զ.—Դէ...

Մ.—Այո այնտեղ ինչ որ բան կայ, ինչ որ, այո։

Դ.—Ես ոչ ոքի չեմ սպասում։

Մ.—(լսելով) Այո, այո, ինչ է այնտեղ շարժւում ահա այնտեղ, այնտեղ դռան առաջը, իհարկէ այնտեղ մի բան սողում է. ինչ է այն դստրիկս.

Դ.—Այդ գիշերային թռչուն է մայրիկս. ո՞վ էք դուք։

Զ.—Դէ... ես մարդ եմ և ունեմ հետս սպիտակեղէն։

Դ.—Մարդ սպիտակեղէնո՞վ։

Զ.—Այո։

Մ.—Է՛հ ո՛չ դստրիկս, ո՛չ, ես լսում եմ, որ այնտեղ մէկը խօսում է։ Ո՞վ է այն. այդ քո ձայնը չէ քոնը չէ, բայց ոչ այնտեղ մէկը կայ, ո՞վ է այնտեղ դստրիկս.

Դ.—Մայրիկ, դէ ես ասում եմ. որ այնտեղ ոչ ոք չկայ։

Մ.—Այո այնտեղ ով որ մէկը կայ. (դուռը ծեծում են)։ Դու լսո՞ւմ ես, դուռը ծեծում են. ո՞վ է այնտեղ, հարցրու ո՞վ է այնտեղ։

Դ.—Մայրիկ դա մոլորւած մարդ է և ուզում է իմանալ, թէ ինչպէս պիտի անցնել։

Մ.—Ա՜խ, Թող Աստուած պահէ նրան, այսպիսի գիշերում. ա՜խ Աստուած իմ, դէ դստրիկս, շո՛ւտ բաց արա այդ խեղճի համար, Թող գայ հանգստանայ և մի բան ուտի, ա՜խ Աստուած իմ, լսի՛ր. (դուռը ծեծում են) ա՜խ պէտք է բանալ, պէտք է գթասիրտ լինել։

Դ.— Մայրիկ, ես վախենում եմ, այդ արդէն երկրորդ անգամն է, քէֆերը կարող են գալ։

Մ.—Մի վախենայ, այդ բարի գործ է և պէտք է միշտ բարի գործել։ (դուռը ծեծում են)

Դ.—(դառն ուղղութեամբ) Ո՛չ։

Մ.—Դու ձիանների ձայնը չե՞ս լսում։

Դ.—Այդ ինչ աղմուկ է.

Զ.—Ոչ մի աղմուկ չկայ... ա՜խ այնտեղ ներքեւումն...ես չգիտեմ. ո՛չ, այդ այնտեղ եկողների ձայնն է։

Մ.—Բայց դստրիկս, լսի՛ր, այնտեղ դռան առաջ ինչ որ բան շարժւում է։

Դ.—Մայրիկ այդ անձրևն է դռան խփում։ (դուռը ծեծում են) ո՛չ։

Մ.—Բայց ոչ, քո մայրը խուլ չէ. նա լսում է անգամ խոտի աճման ձայնը։ Այդ աղմուկն ինչ որ բանից է, ինչ որ բան քարշւում է. ա՜խ այժմ ես հասկանում եմ, այդ մեր բարի տիրամայրն է ձիով բերդից հկել. ձի՛ նա խոստացել է. այո՛ իհարկէ, այդ նա է աղջիկս, ես գիտեմ նրա ձայնը, այդ նա է բաց շուտով։ (դուռը ծեծում են)

Դ.—(դէպի դուռը) Ո՛չ. (մօտենալով մօրը եւ բռնելով նրա ձեռքերը) ա՜խ մայրիկ, ես վախենում եմ գիշերը հկողներից։

Մ.—(մի փոքր լուռթիւնից յետոյ նայելով նրա աչքերին) Ինչու՞ դստրիկս Քրիստոս մեզ հետ է։

Դ.—Ա՛խ մայրիկ, ինչ է պատահել քեզ հետ, դու այնպէս դողո՞ւմ ես։

Մ.—Այդ նրա գալստեան ուրախութիւնից է։ (դուռը ծեծում են)

Դ.—Ես բաց չեմ անի։

Զ.—Ա՛ սատանան տանի։

Մ.—Այդ մեր փափագելի հիւրն է։

Դ.—(Ընդհատւող ձայնով) Բայց այդ վատ է. այդ, ա՜խ, ա՜խ, ա՜խ այդ վատ է... այդ բարին չէ, ա՜խ, ա՜խ ... ես քեզ ասել եմ, որ պէտք է... բանալ, ա՜խ, որ պէտք է բա... նալ, բանալ։ (դուռը ծեծում են)

Զ.—Այդպէս ուրեմն դուք չէք ցանկանում բանալ.

Դ.—Ո՛չ հեռացէք, ա՜խ ինչ է պատահել քեզ հետ մայրիկ, քո ձեռքերը բոլորովին սառել են։

Զ.—Դէ լաւ ես կը սպասեմ։

Դ.—Ես ոչ մի ժամանակ բաց չեմ անի։

Զ.—Այդ դեռ մենք կը տեսնենք։

Դ.—Օ՜ մայրիկ դու...

Մ.—(ձեւալով եւ հագալով) Դստրիկս, ես մի գեղեցիկ երազ եմ տեսել, ա՜խ բարձրացրու մի քիչ բարձը, այո՛ գեղեցիկ երազ, ես դրախտում էի... (հագալով) և պարտիզում... (հագ) բոլոր հրեշտակները (երկու ձեռքերը շարժելով, իբր թե կամենում է պարել) *պարում էին* (երգելով) *ես սուրբ կոյսի հետ... (ամբողջ ժամանակ շարժումներով ցոյց տալով) պարում էի... (հագ) տօն է գեղեցիկ տօն, ա՜խ, ա՜խ, ա՜խ* (սարսափելի ձիգեր է գործադրում բարձրանալու համար)։

Դ.—(պահելով մօրը եւ սրբելով նրա երեսի tրtիները) *Մայր, ո՛ մայրիկ.*

Մ.—Դրախտի ծաղկանց միջին... (լուռթիւն, որից յետոյ հագ, խօսքը փոխում է) մի՞թէ նա հեռացել է, որ որ ես այլևս նրա ձայնը չեմ լսում։

Դ.—(նայելով դռանը) Այո՛ մայր, այո՛... այո՛... նա գնացել է։

Մ.—Թող աէրն իւր երկնային պահապաններով պահէ նրան։

Դ.—Այո՛ մայրիկ, ես կ'աղօթեմ նրա համար։

Մ.—(դանդաղ թեււելով) *Այո՛ պէտք է աղօթել պէտք է աղօթել... պէտք է աղօթել. (խոր հառաչ) աղօթել սուրբ կոյս Մարիամին, իւր Ծառայի համար ասենք «հայր մեր» բարձրացրու մի քիչ խաչելութիւնը ես վատ եմ տեսնում. այո այդպէս, այո՛։*

Լսւում է ինչպէս նրանք աղօթք են մրմնջում. դեռ լսւում է համրիչի ձայնը և հազ. անձրևը աղմկում է խփելով պատուհաններին։ Դանդաղ խփում է ժամը 11. լսւում է ինչպէս շուն հաչում է. աղջիկը մարում է մոմերը. քեմը մութ է

Գ. ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Թմբկահարութիւն. հեռւում փողի ձայն. օրգանը նւագում է. դուռն ուժեղ կերպով ծեծում են.

Դ.—Ա՜խ Աստուած իմ, ա՜խ Աստուած իմ. լսեցէք վերջապէս. սարսափելի է, իմ մայրը կը մեռնի վախից։

Ձմեռը Սիբիրի գավառներում

Զ.—(դռսից) Ահա և ես։

Դ.—Բայց աղաչում եմ ձեզ, լսեցէք աղաչում, եմ ։ Աստւած իմ։

Զ.—Դէ ինչ է, ահա և ես այստեղ եմ։ (դուռը ծեծում են)։

Դ.—Իսկ ինչ է ձեզ հարկաւոր։

Զ.—Ի՞նչ, մտնել։ (դուռը ծեծում են)։

Դ.—Սակայն դուք ինձ խոստացաք մինչև առաւօտ սպասել։

Զ.—(frfիջով) Ա՜խ, ասացէք խնդրեմ, չէ՞ որ ես հէնց նոր եմ եկել, ճիշտ չէ՞. է՜ դուք։

Մ.—Դատրիկս մոմը վառիր։

Դ.—Դուք ճիշտ չէք խօսում։

Զ.—Ախ սատանան տանի, ինչ էք դուք ինձնով ծիծաղում.

Մ.—Դատրիկս, վառիր և միւս մոմը չէ՞ որ նա այնտեղ է։ (յոյսն ուժեղանում է)

Զ.—Ի՞նչու թոյլ չէք տալիս ինձ ձեր մօտ գալ։

Դ.—Դուք ինձ պէտք չէք։

Զ.—Լաւ, լաւ, ամենն էլ հերթ ունեն. ես այստեղ ամենևին քեզ համար էլ չեմ եկել. ահա թէ ինչ։

Մ.—(ցաւագին դիտելով սենեակը) Իմ տունն անպատշաճ է նրան ընդունելու համար։

Զ.—Ա՛ թէ ինչ. բաց արէք թէ չէ ես կրնկահան կանեմ։

Մ.—Դէ դատրիկս... բարձրացրու վարագոյրը... թող արևն ընկնի... այդպէս յամենայն դէպս աւելի լաւ կը լինի (ձեռներն ուրախ շարժումով բանալով). որ բոլորը տօնական լինի. չէ՞ որ նա հիմա կը մտնի։

Դ.—Լաւ, մայրիկ. (բարձրացնում է ծածկոցը լուսամուտը լուսաւորուած. պատի վրայ երեւում են դիակառքերի սւերներ)

Մ.—Այս ինչ սաւեր է։

Դ.—Ա՜խ։ (արագութեամբ վարագոյրը գցում է)։

Մ.—Դատրիկս վերցրու սուրը ջրից։

Դ.—(վերցնելով ս. ջուր եւ սրսկելով. դէպի դուռը) Ո՛չ, ով էք դուք։

Զ.—Նու սատանան տանի, ես մի մարդ եմ... որ ունիմ հետս այս իրը...

Դ.—(սրսկելով դէպի աջ, ձախ, իր առաջ եւ դէպի դուռը, ցիրս ամուն մի բայլի հետ լսում է դուռն խուլ ձայնը, մայրը խաչակնքում է, փորր լուրիւն), Ի՞նչեր էք։

Զ.—Ես մի մարդ եմ դագաղով, այո դագաղով։

Դ.—(աղաղակ արձակելով) Ա՜խ մարդ է...

Զ.—Գուցէ ինձ չէիք է՞լ սպասում։

Մ.—(հեւացող ձայնով) Դատրիկս բաց արա դուռը թող գայ։

Դ.—Մայրիկ այդ սիրամայր չէ... այդ ով որ է ... հետապնդումից է փախչում և որոնում ապաստան։

Մ.—(խեղդւող ձայնով) Բաց դատրիկս, ախ, ախ ախ,բաց... չուտ, չուտ, ախ, ախ, նա ցանկալի հիւր է ախ, ջուր, ջուր տուր ինձ։

Զ.—Սատանան տանի, այս ինչ բեռ է։ (դուռը ծեծում են)

Մ.—Ա՜խ դատրիկս, ես խեղդւում եմ... ուր է Աչելուքիւնը... ես էլ նրան չեմ տեսնում, այո, այո պէտք է դուռը բանալ։

Զ.—Այդպէս նա բոլորովին կը թրջւի։

Մ. –Արի սեղանը ծածկիր... ամենալաւ սփռոցը անկողին.. (խփելով կրծքին) ահա այստեղ, հէնց այստեղ (խեղդւող ձայնով) օ՜ ևկ քաղիր ծաղիկները, այո այո նա այնտեղ է, բայց չէ։ (դուռն անկանոն ծեծում են)

Զ—Պէտք է դուռը փշրելով հանել։

Մ.—Այո նրան տեսնում եմ այնտեղ, ես ճանաչում եմ, օ՛ մեր գեղեցիկ սիրամայրն է։ (նոր զարկեր դռան)։

Զ.—Հէյ ինչ էք անում դուք այդ տեղ (փողոցում ձայներ)։

Մ.—(խեղդւած ձայնով) Մեր գեղեցիկ սիրամայրն է.. նա իմ առաջն է, տեսնում ես դու այժմ դռները... նրանք այլևս չկան, բայ... (դուռը ծեծում են լսւում է դռան ճռռոց)։ Այո նա մի իր ունի հետը ինչ որ բան կայ ուսին (խաչակնքում է)։

Դ.—Օ՜խ մայրիկ ...

Զ.—Եթէ այդպէս էր պէտք, ո՞ւաւասիկ։ (զարկեր բնդհւն)։

Դ.—Հեռացէք, հեռացէք՝ ով որ էլ լինէք, ես ձեզ ասում եմ հեռացէք, դուռը ոչ մի ժամանակ բաց չեմ անի, ո՛չ մի ժամանակ, ո՛չ մի ժամանակ. դուք հկել-էք, որ իմ մօրը սպանէք չէ՞. (բնդհւն) ինչ էք դուք ձեզ հետ բերել, մա՞ն այնպէն չէ՞. ա՜խ Աստւած իմ բայց ինչ եմ արել ես ձեզ. ա՜խ Աստւած իմ, ա՜խ, Աստւած իմ, ա՜խ Աստւած իմ... (զարկեր եւ բնդհւն նա ծունկ է չոքում դռան առաջ եւ հեկեկում)։

Մ.—(մեծ ջանք գործ դնելով բարձրանալու համար) Մտէք մեր գեղեցիկ սիրամայր, օրը հասել է և ես պատրաստ եմ։

Դ.—(ձնկաչոք եւ ձեռքերն ամբառնած) Օ՜ օ՜ ես վախենում եմ,դատարէք աղաչում եմ, դատարէք աղաչում եմ ես ձեզ, մենք թշւառ կանայք ենք, մենք ոչինչ չունենք։ Իմ մայրը հիւանդ է, չէ՞ դուք մեզ համար չէք եկել, այնպէս չէ՞. դուք չարագործ չէք, ես դուռը բաց կանեմ, բայց դուք խիղճ ունէք, ճիշտ չէ՞. դուք չէք կամենում իմ խեղճ մօր մահը... (զարկերն ուժեղանում են դրսում տաք վիճաբանութիւն. պառաւը սասիկ խռխռալ է սկսում, աղջիկը ծունկ չոքում մօր մահճակալի առաջ) ա՜խ մայրիկ, հանդստացիր, ինչ է քեզ պատահել, մի խըռացրու այդպէս, ես վախից մեռնում եմ, ես քո ոտների առաջն եմ, քեզ հետ միասին. մայրիկ նայիր, այդ ես, քո հրեշտակիկը, ինչու դու ինձ այլևս չես պատասխանում։

Մ.—Ո՞վ ես դու հրեշտակիկս։

Զ.—Ժամանակ է, ժամանակ։ (Սասիկ զարկեր եւ բնդհւն)

Դ.—(տակաւին ծնկաչոք մահճակալի առաջ) Բայց դուք ներս չէք մտնի, ո՛չ դուք, ո՛չ ուրիշները։

Զ.—կը տեսնենք։

(ուժեղացած զարկեր, դռան մի կտորը բռնում է ընկնում սենեակ ապա դրսում վհն է սկսւում)

Դ.—Օ՜ մայրիկ, ինչպէս դու դողում ես, քո ձեռքերն այնպէս սառն են. մի վախենայ, նայիր քեզ պահպանում է քո Թանկագին հրեշտակը, նրանք քեզ ոչինչ չեն կարող անել, մի՞թէ դու ինձ այլևս չես ճանաչում. օ՜ մայրիկ, մի՛ նայիր ինձ այդպէս անշարժ հայեացքով, ես այժմ վախենում եմ քեզնից։ (լսւում է ձիաների խրխնջոց)

Մ.—(Ժպտալով, դստեր սեղմելով իւր կրծքին, աջ ձեռով ցոյց է տալիս դուռը) Այդ դիակառքն է։

(Մեծ կորեցի ադմուկ, որ կանգ է առնում դռան առաջ. լոյսը ցոլում է դռան ապակիից, Աղաղակալի վհն լսւում է բառեր խառը հայհոյանքով.)

«Ի՞նչ է, չեն կամենում բանա՞լ».

«Դուռը փակած է. Օ՜, տա տա-տա ուր է նա պէտք է դուռը կրնկահան անել»

«Բոլորովին բաց է, այդ դիակ է դիակ»։ (Ուժեղ զարկերով գոռի դուռն վրայ.)

Մ.— (Որը լսել է այդ ամենը, բաց բերանով զարմացած) *օ՜ սո՜ւրբը Կույս Մարիամ։*

Գ.— *Մայրիկ այդ ես եմ քեզ գրկում, Նայիր և օրհնիր ինձ, մայրիկ դու իմ գրկումն ես. օ՜ Նայիր դէ...*

Դրսում կատաղի աղմուկ. դուռը թափով ընկնում է. դուռը վազում է դէպի դուռը և հրում նրան ձեռքերով. կռիւ. սաստիկ իրարանցում։

Դանդաղօրէն խփում է ժամը 12 դիշերւայ։

Բոլոր ձայները. մի առանձին թեթեւութեամբ, ախ..., կէս գիշերի վերջին զարկին պառաւն արձակում է սարսափելի խռպոտ աղաղակ. աղջիկը հեռանում է դռնից յուսահատ. դէպի մահճակալը ձեռները տարածած, այդ ժամանակ դուռը թափով աղմուկով ընկնում է նրա յետևից և իր սառն շնչով հանգցնում երկու մոմերը...։ Թրգմ. Ա. ՀԱՅՈՒՄԵԱՆ

ՎԱՐԱԳՈՅՐ

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ

Երկուշաբթի—Հոկտեմբերի 5-ին հայ դերասանական ընկերութիւնը միանդամից դրել էր Մ. Մանուէլեանի 3 պիէսները Շեղւածներ, Հէֆիաք, Հրաբուխ։

Միևնոյն գրողի երեք աշխատանքը կողք-կողքի տեսնելով, հանդիսականը հնարաւորութիւն ունէր ըմբռնելու երեք գրւածքի հիմնական սրամտրութիւնը, կամ աւելի ճիշտ ասած՝—հոգեբանական հիմնական լարը։

Մ. Մանուէլեանի պիէսների լարը—*վախն ու սարսափն են, յուսահատ մռայլ հոգեկան սրամտրութիւն որ երեք գրւածքների լէյթ-մոտիւն է կազմում և վերջանում է անխուսափելի օրհասական մահով Նրա պիէսը*՝ *հերոսը թէ ձգտում է դէպ ճշմարտութեան անշէջ աստղը («Շեղւածներ»*—*նրա ճանապարհն անցնում է նախկին ձգտողների գոհերի գերեզմանների միջով, բորենիների և գայլերի ոռնոցների տակ,* —*թէ արեւելեան վաւաւուն գոյներով լուսաւորւած կիրք-սէրն է ; սմալում մարդուն*—*նրան սպասում է իր վրէժխնդիր կնոջ դաժան վրէժը յանձին իր որդու մահուան*;—*թէ վերջապէս հրաբուխ սէրն է գայթակղում երկու անձանց, մէկին սպասում է մահը հիւանդանոցում, միւսին անձնասպանութիւնը։*

Բացի դրանից Միք. Մանուէլեանը կարծէք մի առանձին հաճոյքով խտացնում է մահուան տանջանքների գոյները։ Ճշմարտութեան ձգտողները անասելի տանջանքների մէջ գալարւում և հեծեծում են անդունդում։ Եւ «Շեղւածների» գլխաւոր հերոսը ճշմարտութեանը ձգտողը աննկարագրելի սարսափով է բռնւում տեսնելով ու լսելով նրանց տանջանքները։ Հէնց այդ սարսափն է շեշտւում և բորենիների ու գայլերի ոռնոցը։ Ճիշտ է դառն ու փշոտ է ճշմարտութեան ձգտողների ճանապարհը բայց մի՞թէ մի փոքր, մի աննշան մխիթարանք չունին նրանք, մխիթարանք թէկուզ արած մի փոքր աշխատանքի գիտակցութիւնից, մխիթարանք մի մտաւոր պրօզրեսի գիտակցութիւնից.., Ինչո՞ւ, ինչո՞ւ միայն մռայլ սառսըռեցնող կօլօրիտ։

Մահուան տանջանքների նոյն գոյների խտացումը և Հէֆիաք ի մէջ, որի լեզուն բաւական հարուստ և գեղեցիկ է։ Այստեղ սիրոյ և վրէժխնդրութեան գոհ —*երիտասարդը գալարւում է ծովը և գտնում իր մահը գարնւելով փրփրալից ալիքներին և սուր սուր ժայռերին։ Եւ վերջապէս «Հրաբուխ»ի գլխաւոր հերոս- նկարիչ Հուբէնին իր արդարութեան կատարեալ գիտակցութիւնն անգամ անկարող են լինում նրան ազատել ինքնասպանութեան կոշմարից։*

Այս երրորդ պիէսի մէջ ընդգծւում է և մի ուրիշ հոգեբանական լար՝—*գալիք անխուսափելի օրհասական մահուան սարսուռ սպասումը։ Բեմի վրայ գործող անձինք համակւած են մի սարսըռելի վախով, թէ բեմի հիւանդ հերոսը հիւանդանոցում կարող է մեռնել։ «Իսկ եթէ նրան մի բան պատահի»*—*կրկնում ու կրկնում են նրանք անվերջ։ Եւ պատահում է այդ բանը*—*մեռնում է նա և նկարիչը վերջացնում է անձնասպանութեամբ։*

Այս վերջի պիէսի վրայ նկատւում է բելգիական նշանաւոր գրող Մ. Մետերլինկի աղդեցութիւնը։ Հիմնական հոգեբանական լարը—*գալիք օրհասի սպասումը*—*նոյնն է։*

Այսպիսով մռայլ և յուսահատ տրամադրութիւնը մահուան տանջանքների խտացումը և վերջապէս գալիք օրհասի սարսուռ սպասումը Միք. Մանուէլեանի 3 պիէսների կարմիր թելն են կազմում։

Հրաբուխ-*ի մէջ նկատւում է զգալի պրօգրես երիտասարդ գրողի գրական աշխատանքի մէջ։ Գործող անձինք աւելի բէալական գծերով են ընդգծւած, նրանք աւելի կենդանի են։ Նկատւում է աւելի ուշիմ հոգեբանական աշխատանք և սրտագին ողջունում ենք արւեստագէտ-դրամատուրգի այդ յառաջադիմութիւնը։*

Երկուշաբթի նոյեմբերի 9-ին Մեծ Ցանցառը-ը *դրամա հդ. Սօբօլշչիկ. Սամարինի թարգմ. Միրզոյեանի։*

Այս պիէսը Մորիս Մետերլինկի Մարիամ Մագթաղինացի դրամայի համարեա փոխադրութիւնն է։ Սակայն Մետերլինկը իր դրամայի ֆարուլան վերցրել է Աւետարանի Մարիամ Մագթաղինացու մասին տեղեկութիւններից և նրա վրայ է հիւսել իր հարուստ երեւակայութիւնը։ Սօբօլշչիկով Սամարինը դէպքը տեղափոխել է Հռոմ, պատմական ճշմարտութիւնը խառնել ֆանտազիա-ի հետ։ Հանդիսատեսը մոլորւում է այդ քաօսի մէջ և չգիտէ Յուդան է, թէ չէ, Մագթաղինացին է, թէ ոչ մայլն։

Այս գրւածքի մէջ ակնյայտ երեւում է Մետերլինկի հիմնական գաղափարը — հոգեկան յուզումները սրտի-խորքի տանջանքներն ու տատանումները գերազատել աֆֆիկտաւոր գործողութիւններից։ Սօբօլ. Սամարինը շատ է ոգևորւում այդ յուզումներն ու ելևէջները պատկերացնելով, և դարձնում է տեսարանները յոգնեցուցիչ։— Օրինակ 4-րդ արար. այնքան դժւար ու տանջալից էր որ ուղղակի հանդիսականը սոսկում էր Սիրանուշին նայելով, որին վիճակւած էր այդ տանջանքներին արտայայտել լիուլի գեղօրէն։

Դառնանք բովանդակութեան։

Հռոմի շքեղ ու չքնաղ կուրտիզանկալիան իր ամբողջ սրտով ատում է պատրիկներին։ Նա զրում է իրան գոհ նրանց շուրթ կեանքի և վճռում է ոչ մի պատրիկի չքաղնել չէմքից։ Նա այժմ սիրուհի է ազատագրւած սարուկ Ֆաոնի։ Նա չըդիտէ իր սիրեկանի նախկին սարուկ լինելը։ Այդ բանը նրան յայտնում է իր վրայ անյոյս սիրահարւած պատրիկ Կորնէլիոսը, որը առանց թոյլտւութեան ներս է մտնում Կալիայի մօտ։ Երբ Ֆաոնը զայրացած նրան ուղում է դուրս շպրտել, պատրիկ Կորնէլիոսը նրան իր սիրուհու առաջ ոչնչացնելու համար յայտնում է որ նա նախկին սարուկ է և որ իր պատշդամբից տեսել է, ինչպէս հրեանի պարտէզից Հռոմում նոր երեւացող քարոզիչը վռնտել է նրան։ Կալիան արշամարեանօք կորում է իր յարաբերութիւնը

Ֆաոնի հետ և սկսում է հետաքրքրել նոր քարոզչով։ Նա գնում է Կորնելիոսի տուն, որ այնտեղից տեսնի քարոզչին։ Այնտեղ նա պատահում է քրմապետ Աֆրին, որը նրան առաջարկում է մի խարդախ գործ՝—գրաւել իւր դեղեցկութեամբ շարոզչին և յանձնել իրան՝—քրմապետին։ Կալիան նողկանքով մերժում է այդ առաջարկը և հեռանում է։ Նա մտնում է հարևանի պարտէզը, ուր այդ ժամանակ քարոզում էր քարոզիչը։ Ամբոխը նկատում է անառակ կնոջը։ Բարձրանում է մի ժխոր։— Ամբոխը կատաղած վրայ է հասնում քարկոծելու Կալիային։ Կալիան իրան քցում է կրկին Կորնելիոսի բակը։ Քրմապետն ու Կորնելիոսը անդօր են ամբոխի զայրոյթի առաջ։ Կիսաուշ Կալիան ուժասպառ հազիւ է կրթնել Կորնելիոսի պաշտպանին—մահն անխուսափելի է. Բայց ահա հնչում է վեհ աստւածային ձայնը—**«Ով արդար է, քող առաջինը ճնթի քարը»**—վայրկենապէս իջնում, չքանում է ամբոխի կատաղութիւնից—Նա հեռանում է։ Կալիան ազատած է. Ոչ պակաս ամբոխից ցնցւած է իր հոգու խորքից այդ վեհ պատգամից Կալիան—անառակ կինը։ Այդ րոպէից նրա ամբողջ էութիւնը փոթորկւում, վերակենդանանում է։ Նա նոր է զգում իր անցած զեղծ կեանքի գարշանքը և վճռում է ապաշխարանքով քաւել իր մեղքերը։ Սև շղարշով ծածկւած նա գնում է քարոզչի մօտ, լւանում է նրա ոտները իր աղջման արտասուքներով և սրբում իր մազերով։ Քարոզիչը մնում գնում է իւր ձեռքը նրա գլխին և նորոգմամբ մրմնջում՝ **«Ստաղալուբիւն ինձ»**—ներկայ գտնւող Ֆաոնը, տեսնելով այս, բորբոքւում է նախանձից։ Նրան թւում է, որ քարոզիչը հրապուրւեց իր նախկին սիրուհիով, որ նա երկրային-մարմնական զգացմունքով շոյեց նրա գլուխը։ Նա չէր հասկանում քարոզչի ուսմունքը—ուսմունքի վեհութիւնը։ Առանց այն էլ նա հիասթափւել էր քարոզչից։ Լսելով նրա նոր վարդապետութեան մասին—որ դէմ է իշխող կարգերին, նա նախկին ստրուկը երազել էր լսել նրանցից ստրուկների ազատութեան մարտի ահեղագոչ հրաւէրը։ Փոխանակը նա նրանից լսել է միայն ու միմիայն խոնարհութեան ու հեզութեան քարոզը։ Այսպիսով քարոզիչը փշրել, խորտակել է նրա մէջ հաւատը դէպ կռիւը—ազատութեան կռիւը, իսկ այժմ էլ խլում էր նրանից իր միակ սէրը։ Վրէժաթորբոք Ֆաոնը վճռում է մի հարւածով ոչընչացնել նրան և մատնում է իշխանութեան։ Ներոնը և խորհուրդը անձին պատրիկների ու քրմերի մահուան են դատապարտում քարոզչին։ Վաղը նրա գլխատման օրն է։ Կորնելիոսը գնում, յայտնում է այդ սև լուրերը Կալիային։ Կալիան ծայրայեղ յուսահատութեան մէջ է։ Նա զալկանում, նա ուղղակի անասելի հոգեկան տանջանքներ է տանում երբ մտածում է քարոզչի անելանելի դրութեան մասին։ Կորնելիոսը օգտւելով նրա ծայրայեղ յուսահատութիւնից, խոստանում է մի կերպով ազատել քարոզչին եթէ միայն . . . — Կալիան կնւիրւի իրան մի հեշտանքի գիշեր։ Մի վայրկեան միայն, մի վայրկեան փայլեց յուսոյ ճառագայթը Կալիային։ Սակայն նա իսկոյն մարեց, երբ դժբաղդ կինը ըմբռնեց ի՜նչ թանգ գնով են պահանջում։

Կորնելիոսը գնում է ասելով որ նւագով կը գայ իր մօտ այս գիշերը և վաղը քարոզիչն ազատ կը լինի։ Բայց երբ սիրաբորբոք Կորնելիոսը նւագով գալիս է Կալիայի մօտ՝—վերջինս անկարող է լինում ընդունել նրան, անկարող է լինում կրկնել իր զեղծ կեանքը։

Միւս առաւօտ գլխատում են վեհ քարոզչին։ Ղազի սուր խայթոցների անասելի տանջանքներին վերջ տալու համար, Ֆաոնը գցում է իրան գետը, իսկ Կալիան մեռնում է։

Տալով բովանդակութիւնը, կրկնում ենք նմանութիւնը այս պիէսի Մեթերլինկի Մարիամ Մագդաղինացու հետ և արդիօք աւելի հպատակայարմար, գեղեցիկ և պատմականօրէն ճիշտ չէ՞ր լինի եթէ թարգմանւէր ուղղակի բնագիրը, քան սրա փոխադրութիւնը։

Իրանց մտածածին խաղով մեր վետերան արտիստներ տ. Սիրանոյշ և Աբէլեան հմայեցին հանդիսականներին։

Պ. Սևումեանը լաւ էր առաջին արարում, երբ հպարտ, ինքնագոհ-անձնասէր պատրիկը քմծիծաղ ոչնչացնում է Կալիայի առաջ իր սիրոյ ախոյեան Ֆաոնին։ Սակայն սիրոյ արտայայտութիւնների մէջ նա ուժեղ չէր։

Տիկ. Մանուչարեանի գրիմը ամենևին պատւաւի գրիմ չէր։ Տարօրինակ էր թւում, երբ Կալիա-Սիրանոյշը դառնում էր նրան «Պատւու իմ մայրս» անւանելով։

ՍԱՖՕ

Дозволено воен. цензурой 1915 г. Тифлис.

ՋՈՒԲԱԼՈՎԻ ԺՈՂՈՎՐԴ. ԹԱՏՐՈՆ

Ամօ-Խարազեանի ղեկավարութեամբ Հայկ. Դրամատիկ խմբակցութիւնը, բաւական աջող, սեզոնիս սկզբից շարունակում է իր ներկայացումները ժողովրդ. (Ջուբալովի) թատրոնում։ Խմբի մէջն է շնորհալի դերասանուհի տ. Ցամիկը որ շնորհիւ իր տաղանդին և բարեխղճաբար դերեր ուսումնասիրելուն, վաղուց է գրաւել հանդիսականների բուռն յարգանքն ու հիացմունքը։ Օր. Արփենիկ, իբրև նոր ուժ, խոստանում է լաւ ուժերից մէկը լինել։ Ինքը Ամօ-Խարազեան իբրև փորձւած, հմուտ դերասան և ղեկավար, ամէն անգամ բեմի վրայ երևալիս սփռում է իւր շուրջը ձիրքի և տաղանդի յորձանքը։

Յարութիւնեան II-ը լաւ ուժերից մէկն է, իր դերերի մէջ նա միշտ յաջող է և ապագայ խոստանում է։ Սերժը, իբրև կոմիկ աննման է։ Նրա մէջ թագնւած կոմիկական ձիրքերը եթէ մշակւին, նա այդ ճիւղի մէջ շատ կը յառաջդիմէ։ Մինչև այժմ յաջողութեամբ խաղացել է իւր ստանձնած բոլոր դերերը։

Ադաբաբեան, Գալստեան, Գաւոշ, Գօլանջեան, Եանիկեան, Երամեան, Մարութեան և Ռուսեան ջանում են օր օրի վրայ իրանց յառաջդիմութիւնն ընդգծել։

Բեպերտուարը որոշ ծրագրով չէ կազմուած. նկատւում է որ հանդիսականի քմահաճոյքն ու պահանջը նկատի առնւած չէ, որը շատ ցաւալի է մանաւանդ ժողովրդական բեմի համար, որի հանդիսականները իրենց վայրագութեան հանդէպ ծափերով և սուլոցներով, գոռում-գոչումներով և անկարգապահութեամբ նսեմացնում են դեղեցկի տաճարը։

ԵՐԱԺՇՏ. ԺՈՂՈՎՐԴ. ԸՆԿ. ՀԱՄԵՐԳԸ

Կենսունակ թռիչքներով է ընթանում ժողովրդ. երաժշտ. ընկ. որը տւաւ իր երկրորդ կոնցերտը Արտիստ. ընկ. կոնցերտային մեծ դահլիճում։ Դասատունեբից այս անգամ երևան եկաւ և ջութակահար պ. Տիզենհաուզ։ Վերջինս երևան հանեց կատարելագործւած տեխնիկ, ոճ ու գիտակից իշխանութիւն իր գործիքի։ Անշուշտ շնորհալի ջութակահարը իբրև դասատու մի պլիւս է մեր երաժշտագէտ-մանկավարժական դասին որը, տարաբախտաբար շատ նւազ է։

Դեկտեմբեր 8-ին, Արտիստական Ընկ. դահլիճում, Թիֆլիսի Երաժշտական Ընկ. հրաւէրով երիտասարդ լեհ դաշնակահար Յովսէփ Տուրչինսկին տալու է մի համերգ։ Ժամանակակից խոշոր դաշնակահարների շարքում նա անշուշտ բռնում մի պատւաւոր տեղ։ Բուէնոս Այրեսում Տուրչինսկին միանգամից իր վրա յառեց երաժշտական աշխարհի ուշադրութիւնը ոչ շատ հեռու ժամանակներս՝ 1911 թ., զերծ համառուսական դաշնակահարների մրցութեան Պետրոգրադում միաձայն տարաւ առաջին մրցանակը ու մամուլի կողմից միահամուռ դրւատվեց։ Պ. Տուրչինսկին նւագել էր Լիստը գերազանց։ Վերջին տարիներս պ. Տուրչինսկին կոնցերտներ էր տալիս Եւրոպայում մեծ աջողութեամբ։ Այս համերգին նա նւագելու է իր հայրենակից Շոպէնի ստեղծագործութիւնները, որ մի առանձին ոգևորութեամբ է կատարում լեհ երաժշտագէտը։

Թիֆլիս, տպարան Ն. Աղաեեան Պօլից. 7.

ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՍԱԼՕՆ

X-րդ 1915/16 սեզօն, առաջին jour fixe-ի, ուրբաթ, հոկտ. 23-ի արձանագրութեան համառօտութիւն։

Ներկայ են 130 հրաւիրուածներ՝ արուեստագէտներ, գեղագէտներ, գրականագէտներ, լրագրողներ, հրապարակախօսներ, հոգեւորականներ իրանց ընտանիքներով եւ շատ օտարազգեայ երկսեռ հիւրեր, որ լցրել են Սալօնի դահլիճները։ Սեղանատանը հիւրասիրում են հիւրերը ժամը 8-ից մինչեւ կէս գիշեր թէյով, մրգեղէնով, խոյտրաւենիով։

Ժամը 9-ին բժշկապետ պ. Հագրատ Նաւասարդեան բացեց նիստը և ասաց, որ ներկայ 1915-6 թուին Սալօնը լրացնում է իր գոյութեան տասնամեայ շրջանը. թէ ինչ է արել Սալօնը վերջին ինը տարւայ ընթացքում և ինչպիսի գործունէութիւն է ունեցել այդ այսօրւայ զրաղմունքին չէ կարող դառնալ. տարւայ ընթացքում առիթներ կը լինեն մանրամասն քննելու և հաշիւ տալու, թէ ինչ է արել Գրական-Գեղագիտական Սալօնը։ Բայց այսօր, ասաց պ. Բ. Նաւասարդեանը, մենք կարող ենք հաստատել, որ շնորհիւ Տիգրան Նազարեանի զարմանալի եռանդին, Սալօնը ծնունդ առաւ, շրջունակեց, ունեցաւ հետաքրքիր ժողովներ, և որ ամենագլխաւորն է, պատերազմի այս տարում ցոյց տուեց իր կենսունակութիւնը ընդառաջ գնալով աղաղակող և հրատապ պահանջներին։ Բացեց թիւրքահայերի համար ապաստարան՝ ուր ճաշ և թէյ է արւում զաղթականներին։ Այժմ Տիգրան Նազարեանը ձեռնարկել է քարաշէն բնակարան-ապաստարանի պատրաստմանը, որպէսի գալիք ձմեռային ցրտերը չը նեղեն նրանց։ Պ. Բ. Նաւասարդեանը, ընդառաջ գնալով ներկաների ցանկութեանը, առաջարկում է շնորհակալութիւն յայտնել պ. Տիգրան Նազարեանին։ Ներկաները ծափահարում են։ Ապա նախագահը կարդում է Գրական-Գեղագիտական Սալօնի տնօրէն Տիգրան Նազարեանի յայտագիրը՝ «Նահանջի այս դաշտում ևս չի ուզում նահանջել եւ կամենում է Սալօնի ուրբաթները անցեալ տարիների նման այստեղ եւս շարունակել. ևս առաջարկում է Սալօնի յանախորդներին անել՝ ինչ կամենում են, կատարել եւ զբաղել՝ ինչով եւ ինչպես կը ուզեն»։ Մի խօսքով նա իր Սալօնը դնում է հրաւիրածների լիակատար տրամադրութեան տակ. միաժամանակ և նա դէմ չէ, եթէ կը կազմւի որոշ յանձնաժողով և զրաղւի Սալօնի կանոնադրութեան մշակմամբ։ Իր կողմից բժշկապետ Նաւասարդեանը առաջարկում է ընտրել մի յանձնաժողով, որ պէտք է մշակէ Սալօնի առաջիկայ տարւայ աշխատանքների ծրագիրը, պէտքէ կազմէ կանոնադրութիւնը, և միւս ուրբաթներից մէկում ներկայացնէ Սալօնին։ Այդ խնդրի մասին խօսել ցանկացողներին, պ. Բ. Նաւասարդեանը խնդրում է խօսք առնել և խօսել։ Ներկաներից մէկը հարց է տալիս, թէ ինչ գործունէութիւն է ցոյց տուել անցեալ տարի ընտրւած յանձնաժողովը, որ պէտք է զբաղւէր Սալօնի կազմակերպման խնդրով։ Նախագահ պ. Նաւասարդեանը պատասխանում է, որ այժմ լուծւած է այդ յանձնաժողովը։ Ապա խօսք է առնում պ. Հ. Առաքելեանը։ Մինչև նրա խօսելը տեղի է ունենում քարտուղարի ընտրութիւն։ Ընտրւում է պ. Գաբրիէլ Տէր-Հովհաննեան քարտուղար։

Պ. Հ. Առաքելեանը խօսելով Սալօնի անցեալ տարիների գործունէութեան մասին, ասում է, որ Հայկական հարցի վերաբերմամբ Սալօնը աւելի շատ եղել է տհասական, չէ քննել հասարակական և ազգային հարցերը գործնականապէս, և ցանկութիւն է յայտնում, որպէսզի այսուհետև Սալօնը տհասականից անցնի գործնականի։ Սալօնը պէտքէ արձագանք տայ կեանքի հասարակական բնոյթ կրող երևոյթներին նա, պէտք է հանդիսանայ քննադատ, հանրական աշխատանքը լուսաբանող. նա արդարադատ և ողջմիտ քննադատութեան պէտք է ենթարկէ Հայ կեանքը և վերահասու լինի նրա ցաւերի բուժմանը։ Ներկայ համաշխարհային պատերազմը հանդէս է բերել մի շարք գործեր. Հայ կեանքում կատարւում է մի մեծ ողբերգութիւն, ընդհատւած հայրենիքի մէջ բնաջինջ է լինում բնիկ ազգաբնակութիւնը... Սրանք հարցեր են, որոնք չեն կարող վրիպել մեր աչքից։ Եւ պ. Հ. Առաքելեանը գտնում է, որ Գրական-Գեղագիտական Սալօնի առաջին գործը պէտք է լինի այս սեզոնում՝ քննադատել Հայ կեանքը հայերին հասած մեծ և աննախընթաց ազէտի պատճառները։ Ի հարկէ, բացի այդ քննադատութիւնից կարող են լինել և պէտք է որ լինին՝ գրական, դպրոցական գեղարւեստագիտական և այլ հարցեր, որոնցով Սալօնը նոյնպէս զբաղւելու է՝ անցեալի նման։ Իսկ քննադատութիւնը անհրաժեշտ է, նա զղում է մեր ապագայի ապահովութիւնից։ Քննադատութիւնը պէտք է զեկավարւի ճշմարտութեամբ. ամենայն անաչառութեամբ նա պէտք է գործի ճշմարտութեան ձայնը հնչեցնելով և պատմութեան ահեղ դատաստանի առաջ հանելով մեղաւորներին և պատասխանատուներին։

Պ. Ա. Եզեկեանը նկատում է, որ պ. Հ. Առաքելեանի ասածը միայն իւր ցանկութիւնը կարող է լինել. նա գտնում է, որ Գրական-Գեղագիտական հարցերը միայն պէտք է շօշափւեն այստեղ։ Նա դէմ է Սալօնում ատենական դատաստանական գործ ունենալուն. Գրական-Գեղ. Սալօնը իր բնոյթի մէջ պէտք է մնայ։ Եկամուտ բանը իրրև անհրաժեշտութիւն չէ կարող լինել։ Հայ կեանքի և հանրական հարցերի քննադատութիւնը նկատում է այս Սալօնում, որ էական չը պէտքէ լինի։ Բայց դա ևս եկամտաբեր կարող է Գրական-Գեղագիտական Սալօնի զբաղմանը լինել։

Բենիկ վ. Նոյնն է ասում ինչ որ պ. Եզեկեանը. Նա խօսում է ներքին բաժանող ոգու հզօրութեան մասին, գտնում է որ եսական ոգին ուժեղ է մեր մէջ. կարծում է, որ եթէ մենք շնորհով և վարպետօրէն քննադատել չը գիտենք, և որ քննադատութիւնը կարող է սպանել եղած մի փոքրիկ միութիւնը։

Շահեն գտնում է, որ քննադատութիւնը կարող է հեռու տանել. պէտք է օգնել գաղթականներին և որբերին։

Գաս. Խիւեկեան ասում է, որ քննադատութիւնը կը գայ հիմնովին ջլատելու մեր ուժերը, որովհետև քննադատութիւնը առաջ է բերում քայքայում. նա կարծում է, որ չափազանց անհամապատասխայարմար և վնասակար է հրապարակական այսպիսի ժողովում քննադատել. բայց նա դէմ չէ քննադատութեանը սեղմ շրջանակի մէջ, քանի որ սառնասրտութիւն և անաչառութիւն չըկայ մեր մէջ ընդհանրապէս։

Սե. Կանայեան յայտնում է որ քննադատութիւնը հետևանք ունենայ. նա հաւատացած չէ որ եղած քննադատութիւնը կեանքի մէջ նշանակութիւն չունենայ և կ'ընդունի։ Եւ ապա նա խօսում է Սալօնի անկեղրարան լինելու մասին և անհրաժեշտ է համարում կազմակերպել, ձևաւորել. այդ անելու է ընտրելիք յանձնաժողովը։

Ց. Սօղովեան ասում է, որ ելքը այն տպաւորութիւն է ստանում, թէ ներկայ եղողները դէմ են քննադատութեան. բայց նա գըտնում է, որ աւելի լաւ է սահման չը դնել, թէ ինչով կարող է և ինչով չէ կարող զբաղւել Սալօնը։ Նա կարևոր է համարում, որ չը մոռացւի մօտիկը՝ Կովկասահայութեան պէտքերը, և մինչև հեռու վայրին հասնելը, պէտք է քննել մօտիկը, մօտենալ օրինակ այն հարցին, որ վերջերս այստեղ մի որոշ խմբակցութիւն քըշնամաբար է տրամադրւել հայերին, որ և արտայայտւում է վրացական մամուլի մի մասի մէջ։

Ս. Թառայեան խօսելով քննադատութեան մասին ասում է, որ ինքը հասկանում է Հ. Առաքելեանին, նրա սրտի կսկիծը... Երկիրն է քայքայւել և բնաջինջ եղել մինչև երբ լռենք, եզիպտահան դիրք պահելով։ Նա համաձայն չէ, թէ միակ հոգսը որբեր և գաղթականներն են լինելու. բայց միթէ ոչինչ չպէտք է անել այդ ժողովրդի համար, որ իր ոսկիներով բլուրներ է կազմել երկրում։ Թառայեանը յիշում է XIX դարի Ֆրանսիայի խոշոր հասարակական գործիչ Կամբետայի խօսքը թէ «մեհիմ ուժեղ ենք եւ մեր ոյժը կայանում է միայն նրանում, որ չենք վախենում մեզ ճնշադատելուց»։ Նա շատ օգտակար է համարում ինքնաքննադատութիւնը. չը պէտք է վախենալ դրանից։ պ. Թառայեանը մի կէտում դէմ է Հ. Առաքելեանի առաջարկին. սա կարծումէ, որ մենք չենք կարող քննադատել. դրա համար պէտք են գլուխներ։ ... Ո՞վ է մեղաւորը, հարց է տալիս պ. Թառայեանը, և գըտնում է, որ մեղաւորը արդի ապականւած քաղաքականութիւնն է. ներկայ համաշխարհային պատերազմը, ասում է ճառախօսը, սկսել է XII-րդ դարից. երբ կաթոլիկ եկեղեցին դէպի իր անկում դիմից... նա շատ լուրջ է համարում մեղաւորների որոնման առաջարկութիւնը, որ արել է Հ. Առաքելեանը, և գտնում է որ յոյս դնել, թէ ներկայ Սալօնը կը գատավարէ՝ միամտութիւն կը լինի։ Գալով այն հարցին, թէ

Գրական-Գեղագիտական Սալօնը չէ կարող զբաղել հասարակական և քաղաքական հարցերով, պ. Թառայեանը մի շարք օրինակներով հաստատում է, որ գրականութիւն և արուեստ անխզելիօրէն կապած են կեանքի՝ քաղաքականութեան հետ... եթէ օրինակ, նա ցանկանար դասախօսութիւն կարդալ Լ. Շանթի «Հին Աստուածների» մասին, արուեստի հետ անխուսափելիօրէն նա քննելու էր քաղաքական հարցերը, կապելով ներկայ պատերազմի հետ։ Վերջում պ. Թառայեանը խօսում է Սալօնի մասին, զարմանք է յայտնում, թէ այսքան տարի է, ինչ գալիս է, հիւրասիրւում է և չգիտէ,թէ որտեղից այդ բոլորը... Նա առաջարկում է որոշ տուրք վերցնել իրանից որպէսզի ինքը «հալալ արտով» կարողանայ վայելել թէյը և հիւրասիրութիւնը։ Իսկ Սալօնի կազմակերպման մասին նա միտք է յայտնում, որ Սալօնը սառնալով իր կազմակերպումը մնալով մի տեղ, ուր նա և իր նման ուրիշ հայ գլուխներ կարող են հաւաքւել և իրենց սիրտը դատարկել, և որի սանդուղներով է կարող բարձրանալ փողոցից ամէն անցնող։

Յ. Տեր-Գրիգորեան նկատում է, որ այստեղ կատարւում են այնպիսի աշխատանքներ, որոնք յանձնաժողովի գործն է։ Նա առաջարկում է իսկոյն անցնել ընտրութեանը։

Նախագահը փակում է խօսել ցանկացողների ցուցակը։

Իփէկեանը ուղղում է իրան ասելով որ վախենում է ոչ թէ քննադատութիւնից, այլ նրա հետևանքներից։

Եզեկեան խօսում է Թառայեանի դէմ և ասում է, որ նա բոլորովին դէմ չէ կեանքի և իրական երևոյթների վերլուծմանը այս Սալօնում։

Շիրինց խօսում է Թառայեանի դէմ և ասում, որ քննադատութիւնը իր գործը կարող է անել մամուլի մէջ։ Զարմանք է յայտնում, թէ մեր ինչ գործն է թէ երկրում ոսկորների բլուրներ են գոյացել... Բրիստոս միայն իր կեանքի ընթացքում կարողացաւ 22 միհռալի յարութիւն տալ. մինչ մենք կարող ենք հազարաւորներին յարութիւն տալ։

Նախագահը յայտնում է, որ ներկայ են Վանի հայ մտաւորականներից մի քանիսը՝ պրօֆ. Մինասեան, պ. Շաւարշ Հովհաննէսեան և միւսները. առաջարկում է ներկաներին ոտքի կանգնելով հաւանակը յայտնել նրանց. (բոլորը ոտքի են կանգնում) և ապա նա խնդրում է պրօֆ. Մինասեանին խօսել։

Պրօֆ. Մինասեան խօսում է քննադատութեան դէմ եղողների մասին, թէ հիմա քննադատութեան վայրկեանը չէ, թէ նա պատակտում կը դժէ, գլուխները չունենք, և թէ ներկայ Սալօնը զբաղւելու չէ քաղաքական հարցերով։ Մի առ մի պատասխանելով այս առարկութիւններին, պրօֆեսօր Մինասեանը յիշեցնում է, որ վերջերս մամուլի մէջ յաճախ բերւում է հրդեհի օրինակը թէ երբ մի տուն այրւում է, չը պէտք է փնտռել նրա պատճառները, այլ պէտք է մարել. ճառախօսը կարծում է, որ սխալ է այս համեմատութիւնը. հրդեհը չէ կարելի համեմատել կենդանի հասարակական աղէտի հետ. հասարակական աղէտը այլ բնոյթ ունի. այստեղ հրդեհ աղէտը մի երկու ժամ չէ տևում, այլ տարիներ և դարեր, և այդ տևական ու յարատև աղէտի առաջը պէտք է առնել՝ նրա յայտնագործման հէնց առաջին պահուն։ Աղէտը գնալով կը զարգանայ և կը բարդանայ, երբ չըկան նրա առաջը առնողներ։ Ճառախօսը զգացած խօսում է այն մասին, թէ ինչպէս թիւրքահայ մտաւորականներ այստեղ անգործ են մնացել փողոցներում լուցկի են ծախում մինչդեռ թիւրքահայ պաղթական որբերի ապաստարանի տեսուչ է նշանակւում մէկը, որ իր կեանքում և ոչ մէկ օր չէ եղել դպրոցում և կապ չունի թիւրքահայերի հետ։ Նա պնդում է որ քննադատութեան վայրկեանն է. եթէ Կովկասահայ մամուլը զսպած է ցենզուրական պայմանների շնորհիւ, արտասահմանեանը արդէն բարձրացրել է իր ձայնը քննադատում են գողութիւնները և աւազակութիւնները... Պէտք է քննադատութիւն. այդ մի ելք է բողոքին, եթէ գոցւի այդ ելքը՝ կը վնասի գործը։ Գալով պ. Թառայեանի այն մտքին, թէ մենք գլուխները չունենք քննադատութեան համար, ճառախօսը նկատում է, որ մեր ներքին կեանքը, որ ղեկավարւում է ներքին ազդակներով, կարող է քննադատիլ և մեր մէջ ներգործած գլուխներով, թողնելով որ արտաքին կեանքում՝ արտաքին ազդակների առաջադրած աղէտները քննւեն ուրիշ աւելի խոշոր գլուխների կողմից։ Վերջում պրօֆ. Մինասեանը, հաստատելով, որ կեանքը, արուեստը և իրականութիւն ու քաղաքականութիւնը շաղախած են միմեանց, ցանկութիւն է յայտնում որ այստեղ լսւի ողջմիտ քննադատութեան ձայնը։

Նախագահը առաջարկում է լսել նւագածութիւնը. երգեցողութեան պրօֆեսօր պ. Բրօջին իր աշակերտներով դաշնամուրի նւագով երգում են մի քանի իտալերէն և Ռուսերէն եղանակներ, ներկաները ծափահարում են։

Վերսկսելով զրոյցը, նախագահը մի քանի խօսքով դիմում է Ղևոնդ քահանայ Աթանասեանին, որ ներկայ էր հանդէսին, նրա 35-ամեայ քահանայագործութեան առիթով։ Ներկաները ոտքի կանգնած ծափահարում են Տէր-հօրը, որ իր կողմից յիշեցնում է Գրիգոր Արծրունու խօսքը, թէ հայերը առանձին առանձին վերցրած շատ խելօք են մի մի բիսմարկ են, բայց խմբովին՝ բանի պէտք չեն։ Հայր Աթանասեանը խորհուրդ է տալիս ձևականութեան հանից շատ չը դնալ, գործը շատ չը խճճել։

Հ. Առաքելեանը պատասխանում է իր ընդդիմախօսներին և յայտնում է, որ նա ճիւում է իր առաջւայ կարծիքին և պնդում է, որ քննադատութիւնից չը պէտք է վախենալ. նա օրինակ է բերում Ռուսական ներքին կեանքը, բիւրօկրատիայի և պետական դումայի պայքարը և ռուս պրօկլեսիաների խիստ քննադատութիւնը։

Ճառախօսը համաձայն է, որ մենք դատաւորներ չենք կարող հանդիսանալ, բայց պէտք է նիւթեր հաւաքել, բանախօսութիւնների ձևով, դասախօսութիւններով և զեկուցումներով այս կամ այն եզրակացութեանը գալ։ Մալօնը մի հաստատութիւն է, որի մէջ կարող է թնդալ ճշմարտութեան ձայնը։

Բեհիկ վ. մի հարց է տալիս թէ ահա մենք այստեղ կը քննենք, մի եզրակացութեան կը գանք, ինչ գործնական օգուտ, ում համար։ Անցեալ տարի եղել են աւելի բազմամարդ ժողովներ այն ժամանակ էլ դուք բողոքեցիք. ոմ լսեց, ձեր քննադատութիւնը մնաց «ձայն բարբառոյ յանապատի»։

Հ. Առաքելեան պատասխանում է, որ ուրիշ բան է, թէ ոմ կը լսէ կամ չի լսել։ Մենք պէտք է բողոքենք. եթէ անցեալում բողոքը մնացել է անհետևանք այդ չէ նշանակում, թէ այսուհետև բոլորովին պէտք չէ քննադատել և բողոքել. պէտք է ցոյց տանք սխալը, երբ տեսնում ենք որ նա գործւում է և կայ և միայն պատճառով,որ առաջներում քննադատութեան ձայնը չէ լսւել։

Նախագահը առաջարկում է ընտրութիւններին անցնել, ո-

Дозволен. Воен. Цензурою

րոշւում է որ բացականերից ո-
կարելի է ընտրել եթէ կը լինի
երաշխաւորութիւն, որ ընտրւածը
չի մերժէ. ընտրելու են նա-
թիւրքահայ պաղթականներից։ Գ-
նախագահը կարդում է կազ-
մած ընտրելիների ցուցակը, որ
և մի քանի յաւելումներով ըն-
դունւում է։ Ի վերջոյ յանձնա-
ժողովի անդամներ են ընտրւում
1. Տ. Նազարեան 2. Հ. Առաքե-
լեան 3. Ա.. Եզեկեան 4. Յ. Սո-
լովեան 5. պրօֆ. Մ. Մինասեան
6. Ա. Աթանասեան 7. Ա. Նա-
զարէթեան (բացակայ էր. երաշ-
խաւորեցին պ. պ, Հ. Առաքելեան
և Յովհ. Մալխասեան) 8. Ի.
Խանդամատ 9. Յ. Սպենդիարեան
10. Բենիկ վարդապետ 11. Յովհ.
Մալխասեան 12. բժշ. Ա. Շահան
(բացակայ էր, երաշխաւոր մ
քանիսը) 13. Շաւարշ Հովհաննէս
14. բժ.վ. Արծրունի (ընտրու-
թեան միջոցին չըկար դահլիճու
երաշխաւորում են մի քանիսը
15. Մտ. Կանայեան 16. Տիկ. Շ
Խանդամատ և 17. Տիկ. Յ. Սպեն-
դիարեան (բացակայ էր երաշ-
խաւորում են մի քանիսը)։

Ժողովը վերջացաւ ժամը 1
և կէսին։

Նախագահ՝ Բժշկապետ
Բ. Նաւասարդեան
Քարտուղար՝ Դ. Տ.-Ռուբինեան

ՊԱՏՃԷՆ

ՀՐԱՏԱՊ ՍՓՈՓԱՆՔ ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՑԻՆԵՐԻՆ

ՀՐԱՒԷՐ

Մայր Հայաստանում լեռնաւոր-
ւած, հայրը Հայրենիքում յաղթակա-
մահով նահատակւած և սարսափա-
նրա այրին դեռ մայր չեղած՝ արգանդ
պտուղն առած մեզ մօտ փախուստ եկաւ
նորածել, Հայաստանի արշալոյս բեկո-
րիկի՝ այս **հրաւոտ ճոտածին ման-
կան հանդիսաւոր մկրտութեանը,
կիրակի, նոյեմբերի 1-ին, ցերեկուայ
1 ժամին** խորին յարգանքով Գրական-
Գեղագիտական Սալօն, խնդրում է Ձեզ
շնորհ բերել Ձեր ներդաստանով Մայր
Հայաստանցիների ապաստարանը (Co
„АКВАРІУМ“, Михайловскій пр. №
197—199) Ձեր ներկայութեամբ չո-
ու սիրտանք լինելու։

Այդ օրը կատարելու է նոյն տե
և Գրական-Գեղագիտական Սալօնի յա
կապէս Հայաստանի բեկորների հա
կառուցած նորաշէն ձմեռնային ապա
տարանի օրհնութիւնն ու բացումը։

Տնօրէն՝ Տ. ՆԱԶԱՐԵԱ

26 հոկտ. 1915 թ. Թիֆլիս.

Հեռագր. հասցէ՝ Тигран Назарьян,
Тифлис.